

Բաժանորդագրին ԿԱՆԻՅԻԿ Թուրքիոյ Համար տարեկան 50 ղրշ, Ռուսիոյ Համար 5 ռուբլի. ուրիշ երկիրներու Համար 12 ֆր:

Վեցամսեայ եւ եռամսեայ բաժանորդագրութիւնք եւս կ'ընդունուին:

Գաւառներէն Օսմանեան նամակագրոշմ կ'ընդունուի՝ 1 ղրշ. նոցք 31 փարսյի հաշուով, կամ 100 ղրուշի փոխարէն 115 ղրշ: ԾԱՂԻԿԻ ՎԵՐԱԲԵՐԵՎԱԼ ամէն գործի Համար դիմել

Առ ՏՅՕՐԷՆ-Հրատարակիչ ՅՈՎՆԱՆ Պ. ՓԱԼԱԿԱՉԻԱՆ Պոլիս, Պահչէ-Գարու, Թաշ խան, քիւ 50:

40 փարս

ՄԱՂԻԿ

Լ Ր Ա Պ Ի Ր

40 փարս

درعليه ده بفتحه قپوسنده طاش خاندنه
•• نومروده « زاغيك » غزتهسى مديرى
بالاقاشيان حوونان

S'adresser à

HOVNAN PALACACHIAN

Directeur du journal arménien «Dzaghik»

Rue Bahtché-Kapou, Tach Han, 50

CONSTANTINOPLE

ՆՈՐ ՇՐՋԱՆ — Բ. ՏԱՐԻ. ԹԻՒ 5

Շ Ա Բ Ա Թ

16 ՆՈՅԵՄԲԵՐ 1891

ԳՐԱՍԵՆԵՍԿ

ՅԱՆՁՆԱԿԱՏԱՐՈՒԹԵԱՆ

ԾԱՂԻԿԻ Տնօրէնութիւնը պատիւ ունի ծանուցանել իւր ընթերցողաց թէ, գոհացումն տալու համար այն ինդրանաց զորս յաճախ կ'ընդունի, հաստատած է Յանձնակատարութեան Գրասենեակ մը:

Յանձնակատարութեան Գրասենեակը կը հայթայթէ մեծ և փոքր քանակութեամբ ամէն տեսակ ապրանք թէ՛ Պոլսոյ և թէ՛ եւրոպական հըրապարակներէն գնելի, ինչպէս, գիրք ամէն լեզուաւ, պատկերք, ձայնագրութիւնք, դպրոցական և դրասենեակի պիտոյք, ժամացուցի, տպարանական և սյլ արհեստական գործիք, կտակերէնք, ասուերէնք, ըմպելիք, անուշահոտութիւնք, կահ կարասիք, և այլն, և այլն:

Վճարմունք կանխիկ են, բայց ի հարկին կարելի է պայմանաժամաւ եւս գործել այն տանց հետ որ կըրնան արտագրիչներն ապահովել: Փոխադրութեան ծախք կը պատկանին յաճախորդաց:

Յանձնակատարութեան Գրասենեակը կ'ստանձնէ նաեւ վաճառումն ներքին բերքերու թէ՛ Պոլսոյ և թէ՛ օտար հրապարակաց վրայ: Առ այդ կը բաւէ զրկել վաճառելի ապրանց նմոյշները:

Յանձնակատարութեան Գրասենեակը կը փափագի ունենալ թղթակիցներ գաւառական քաղաքներու մէջ:

Թղթակցութիւնք պէտք է ուղղուին առ Յ. Փալապաչեան, Կ. Պոլիս, Պահչէ գարու, Թաշ խան, քիւ 50:

ՅԱՆՁՆԱԿԱՏԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԱՍԼԱՆԵԱՆ ԵՂԲԱՐՑ

Ի Մահմուտ փաշա, Գիւրքահի խան, Թիւ 26 եւ 15, որոյ մասնագիւղն է ի Պահչէ—Գարու, Մաքսատան կարգ, Թիւ 44 Թօհաֆիյէի վաճառատունը:



Թէ՛ մեծ եւ թէ՛ փոքր քանակութեամբ՝ արտնայ, կանանց և տղայոց համար՝ անխառն բրդէ, մանածէ, և այլն, ուղուած թանձրութեամբ և ուղուած չափով յանձնարարութիւնք կ'ընդունուին ու պատրաստ կը ծախուին Փանէլա շապիկներ, վարտիքներ, միսոցուներ, և այլն: Ապրանքները կը մրցին եւրոպականներուն հետ թէ՛ աժանութեամբ, թէ՛ դիմացկունութեամբ և թէ՛ իրենց նուրբ ճաշակով: Յաճախորդք ամէն կերպիւ գոհ պիտի մնան:

Մոշրատեան Մկրտիչ եւ Յովհաննէս

Եղբարց վաճառատունը

ԵՐԿԱԹԻ, ԽՈՒՐՏԱՎԱԹԻ, ԳՈՐԾԵԱՑ ԵՒ ԱՅԼՈՑ

Կ. Պոլիս, Ալաճա Համամ, Թիւ 44 եւ Ղալաթիա, Բէրշէմպէ բազար:

Մահմուտիյէ—ձատտէսի, Թիւ 70 եւ 59:

Անգղիական, գաղղիական և ամերիկեան կարեւոր գործարանաց մէջ պատրաստեալ զանազան տեսակ երկաթեղէնք, ռուսական կախիակաղախք (ամա քիլիտի), հիւսան (տիւլկէր) գործիներ, եկեղեցական զանգակք, խարտոցք, զինկոյէ ամաններ, գործարանաց վերտրերեալ մեքենայք, Երկրագործական բազմազան գործիներ, և այլն, և այլն, ամենքն ալ շատ աժան գներով: Ընկերութեանս մեքենագործն դիւրութիւններ կ'ընծայէ մեքենայից գործածութեան ուսման համար:

Կ. Պոլսէ և գաւառներէ ամէն ուղղակի յանձնարարութիւնք չուտ և կանոնաւոր կը կատարուին: Մեր քով չգտնուածներն ալ յանձնողչէքով եւրոպայէ բերել կուտանք և ուղուած տեղերն ու նաւահանգիստները կը փոխադրեմք:

Մեր վաճառատանց վարչութեան հասցէն է՝

Մ. Յ. ՄՈՒՐՍԵԱՆ ԵՂԲԱՐԳ

70, Երկանճըլար ճատտէսի, Ղալաթիա, Կ. Պոլիս

FRATELLI GOLDENBERG

ԱՄԵՆԷՆ ՄԵԾ, ԱՄԵՆԷՆ ՀԻՆ, ԱՄԵՆԷՆ ՀԱՄԲՍՒՍՒՈՐ

ՀԱՆԴԵՐՁԵՂԻՆԱՅ ՎԱՃԱՌՍՈՒՄՆ

ՀԱՆՐԱԾԱՆՈՐ ՀԱՄԱՅՆ ԵՒՐՈՊ. ԹՈՒՐԿԻՈՅ, ԱՍԻԱԿԱՆ ԹՈՒՐԿԻՈՅ ԵՒ ԵԴԻՊՏՈՍԻ ՄԷՋ

ՖՐԱԹԵԼԼԻ ԿՈՆՏԵՆՊԵՐԿԻ

Այս վաճառատունը կը յանձնարարուի հասարակութեան և ամէն մրցման կրնայ գիմագրել իւր կերպասուց ընտիր յատկութեամբը, պատրաստութեան սովորուածութեամբը, ինչպէս նաեւ հանդերձին գեղեցիկ կարուածքովը:

ՓԼԵԱՌՈՐ ՄՓԵՐԱՆՈՅՔ Ի Կ. ՊՈԼԻՍ

Թիւնէլի քով Թիւ 2, Եւ Քարաքէոյի Կամուրջին գլուխը Թիւ 28

ՄԵՆՍԻՍՏԱՆԿ ԵՒ ՓՈՒՐԱՒԱՆԱԿ ՎԱՃԱՌՈՒՄՆ

Մ Ա Ս Ն Ա Ճ Ի Ի Ղ Ք

Հոտոս, Գալալա, Ռուսնոք, Չմիւռնիա, Վառնա, Պուրիաս, Փիլիպէ, Բոր-Սախա, Սելանիկ, Սամսոն, Մերսին, Քիոս, Թարսուս, Ատանա, Պէրութ, Գամասիոս, Տրիպոլիս (Սուրիական), Եաֆա, Աքեա, Ալեքսանտրիա, Գահիրէ, Եայլն, Եայլն:

ԱՆՍՊԱԿ ԳԻՆԻ ԳԱՐԹԱԼԻ

Խ Ա Վ Ե Ա Ր — Խ Ա Ն, Թ Ի Ի 91

Վերջին ժամանակներս գինեջինութեան արգիւնաւորութեան վրայ յաճախ կը գրուին տեղական ազգային և օտարազգի լրագրաց մէջ, և գոհութեամբ կը շեշտուի սոյն ձեռնարկին մասնագէտ համարուող Սուքիասեան Յակոբ էֆէն-տի անունը, որ իւր երկարամեայ փորձառութեամբն՝ Գարթալի զանազան խաղողներէ՝ ունեցած սեպհական և չրջակայից այգիներէն անձամբ կը պատրաստէ ընարեւազայն և անարատ գինիներ, որոց մէջէն յատուկ գնահատութեան արժանի են՝ ԳԱՐՍ.—ՉԱՎՈՒՇ, ՀՕՐԱ, ՀԱՃԻ—ՕՂԼՈՒ, ՔԵՉԻ—ՄԷՄԷՍԻ և ՆՈՒՐ-ՆԻԿԵԱՐ խաղողներէն՝ սեւ գինի, ինչպէս նաև ՄԻՍՔԷԹ—ՉԱՎՈՒՇ, ԳԱՌԱ.—ՉԱՎՈՒՇ, ՆՈՒՐՆԻԿԵԱՐ և ԳԱՐՈՒ—ՏԱՂԻ ըսուած խաղողներէն՝ ճերմակ և թէ ա-նոյզ գինիներ, որք մայրաքաղաքիս առաջնակարգ բժշկաց կողմէ եւս կը յանձնա-րարուին ամեն կարգի հիւանդաց: — Կը ծախուին շիշով պատրաստ, նաեւ քա-չով և տակաուով: Յատկապէս յանձնարարելի են մեծածախ սեղաններու և խրախ-ձանայ հանդէսներու ու չքասեղաններու համար: 3-15



ՔՈՆՏՈՒԼ ՄՈՒԿԱՆՆԵՐ
(Լ.Ա.Ս.Թ.Ի.Ք.)



ՀԱՆՐԱԾԱՆՈՐ ՆՈՐԹ ՊՐԻԹԻՇ ՐԻՊԷՐ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Մեր յաճախորդներու վառիաքանաց համաձայն, մեր այս տարուան քա-ուչուէ մուճակներն (լաստիք) շինուած են կոշտ քերտով, խիստ հռչա-կաւոր, նուրբ եւ հաստատուն:

Պիւսոյ հրապարակին վրայ երկար ատենէ ի վեր ճանչցուած է թէ մեր քաուչուէ մուճակները կը գերազանցեն քսան տարիէ ի վեր գործածուած բոլոր մուճակները:

Մեր այս մուճակներու ներքին կողմը կշիռի մը և արտաքին կողմն ալ աւելծի մը պատկերը գրոյմուած է իբրեւ նշան: Կը գտնուին բոլոր քաուչուէ մուճակ վաճառողներու քով: Կեդրոնատեղին է ի Պոլիս, Պահ-չէ Գարու, Գոճաման Օղլու խան, ճօրճի կիտրոյի թիւ Ամթերանոցը:

ԼԱՎԸՆԻՌ ՏԷ ՓԱՄԻՅԼ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓՈՒԱԳԱՐՁ ԸՆԿ.

ՎԱՍՆ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹԵԱՆ
ԴՐԱՄԱԳԼԽՈՅ

Կը գործէ ընդ հսկողութեամբ Գաղղիոյ կառավարութեան

Կեդրոնատեղի՝ 61, Բէփուպիք փողոց, Լիոն (Ֆրանսա)

Ապահովագրութեամբ 1 00,000 000 ֆր

ԼԱՎԸՆԻՌ ՏԷ ՓԱՄԻՅԼ ԸՆԿԵՐՈՒ-ԹԻՒՆՆ, որ հաստատուած է նպատե-լու համար փոքր խնայողութեանց, ա-րագ զարգացում մը ունեցած է: Իւր նպատակն է որոշեալ պայմանաժամի մէջ վերակազմել դրամագլուխն:

Ընկերութեան գործառնութիւնը բազմազգի է, ինչպէս շարժական ար-ժէից և փոխ արուած դրամագլխոց ա-պահովագրութիւն, կորուսեալ դրամա-գլխոց մը վերակազմութիւն: Երաշխա-ւորութիւնը և Գլխավճարք՝ փոխառու-թեանց և ճարտարուեստից և վաճա-ռականութեան մէջ գործածուած դը-րամագլխոց, մանկանց համար օժիւք, հանգստեան սնտուկ ծերութեան հա-մար, ցկեանս եկամուտներու կազմու-թիւն, ի մի բան այն ամէն գործառ-նութիւնը որոց նպատակն է խնայողու-թիւն: Ընկերութեան Պիւսոյ գործակա-լութիւնն սկսած է 1884 Յունուար 15-ն: Տեղեկութեանց եւ բաժանորդա-գրութեան համար դիմել առ Բարսեղ էֆէնտի Թէլլալեան, գործակալ Ընկե-րութեան ի Կ. Պոլիս, Պահչէ—Գարու, Շէյխ—Իսլամ խան, թիւ 11:

ԿԱՐՍՊԵՏ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ

Վաճառատունն Ֆէսի եւ Թօնաֆիլի

Կ. Պոլիս, Պահչէ—Գարու, Հաթիբէ հարդեմի, շաքարաձաճա— Հաճէ Պէթըր ողայի խանութի քիմիայի կողմ, Թիւ— 54

Ընտիր Ֆէսեր ամէն տեսակէն, Պէ-զիկի և այլ խաղի թղթեր և մարքէթ: Ճաշակաւոր քաուճակներ, թաշկինակ, գուլպայ, հոտաւէտ նիւթեր, բորթմո-նէ, հովանոց, գաւազան, լաստիկ—կա-լոջ, եւ այլն:

Ճաշակաւոր ընտիր ապրանքներ չա-փաւոր գիներով:

ԻՏԱԼԵՐԷՆ ԵՒ ԳԱՂՂԻՆԵՐԷՆ

Եւրոպա ուսած երիտասարդ մը պատրաստ է ստանձնել մասնաւոր դա-սեր Իտալերէնի և Գաղղիերէնի, վեր-ջին նորուսոյց եղանակներով: Դիմել «Մաղիկ» ի Խմբագրատունը:

Բաժանորդագիրն կԱՆՏԻԿ Թուրքիոյ համար տարեկան 50 դրշ, Ռուսիոյ համար 5 ռուբլի, ուրիշ երկիրներու համար 12 ֆր:

Ղեկավարեալ եւ եռամսեայ բաժանորդագրութիւնք եւս կ'ընդունուին:

Գաւառներէն Օսմանեան նամակագրոջմ կ'ընդունուի՝ 1 զրշ.նոցը 31 փարայի հաշուով, կամ 100 զրուշի փոխարէն 115 զրշ:

ԾԱՂԻԿԻ վերաբերեալ ամէն գործի համար գիմել

Ա. Ռ. Տիգրէն-Հրատարակիչ
ՅՈՒՆՍԵՆ Գ. ՓԱԼԱԿԱՇԻԱՆ
Պոլիս, Պաշէ-Գարու, Թաշխան, քիւ 5

ԾԱՂԻԿ

Լ Ր Ա Գ Ի Ր

درعليه ده بنچه قوسنده طاش خاند
• نومروده « زاغيك » غزته سى مديرى
بالاقاشيان حوونان

S'adresser à

HOVNAN PALACACHIAN

Directeur du journal arménien «Dzaghik»,

Rue Bahtché-Kapou, Tach Han, 50

CONSTANTINOPLE

40 ֆարա • Ա.գգային, Քաղաքական եւ Գրական 40 ֆարա

ՆՈՐ ՇՐՋԱՆ — A. S. X. ԹԻՒ 5

Շ Ա Բ Ա Թ

16 ՆՈՅՄԵՐ 1891

ԾՆՈՂՔ ԵՒ ԶԱՒԱԿՈՒՆՔ (1)

Գաղտնիարարութեան բուն նպատակն է մանկանց հասակի զարգացման հետ հասունացնել նաեւ նոցա հոգեւոր կարողութիւններն, և երբ նոքա թեւակոխած են չափահասութեան տարիքն և կարող են նոր ընտանեաց հիմն դրնել, այն ժամանակ մասամբ կը պակսի իրենց՝ ծնողաց հստակեցումը յարաբերութիւնն, բայց ոչ թէ կը պակսի այն պատիւու յարգանքն, զոր զաւակունք պարտաւոր են ունենալ իրենց բոլոր կենաց մէջ. նոյնպէս թէ եւ ծնողաց կողմէն կը նուազի հրամայական հեղինակութիւնն, բայց պէտք չէ բնաւ որ պակսի իրենց սէրն առ որդիս: Այս պարագային մէջ նաեւ մարդկային կեանքն կը ներկայացնէ մի տխուր հակասութիւն որ պէտք չէ այնպէս լինիլ: Այն որդիքն որոնք չափահաս եղած են և առանձին ընտանիք կազմած, շատ անգամ արժանաւոր պատուով և շնորհակալութեամբ չեն յարգեր իրենց ծերացած ծնողքն: Յաճախ կը պատահի, մանաւանդ գիւղականաց մէջ, որ հայրերն բոլոր իրենց ստացուածքն կը յանձնեն իրենց զաւակաց և սակայն զաւակունք այնպէս կը վարուին նոցա հետ իբր թէ լինէին պարագայ հաց ուտողներ և աւելորդ բեռն իրենց համար: Սակայն կը գտնուին և այնպիսի ծնողք որ իրենց հայրական իշխանութիւնը կը տարածեն սահմանէն աւելի: Նոյնպէս կան մայրեր որոնք բնաւ չեն յօժարիր որ իրենց զաւակունք ազատ լինին, թէ և արդէն չափահաս են: Այսպիսի մայրեր կը նախանձին եթէ իրենց զաւակունք ամուսնանան, որովհետեւ կը կարծեն թէ զաւակունք այլ ևս պիտի չունենան իրենց վրայ առաջին սէրն ու վստահութիւնն: Կան նոյնպէս սկեւորներ որոնք իրենց անընդհատ յանդիմանութիւններով և իրենց բծախնդրութեամբ,

անչափահասներու կարգը կ'իջեցնեն իրենց հարմներն և կ'ուզեն խառնուիլ նոցա ամէն ընտանեկան գործերուն: Սակայն հասակաւորներն պէտք է որ միայն իրենց կամքին չհետեւին, այլ յարգեն և պահպանեն ճշմարիտ սահմանն իրենցմէ փոքրահասակներու նրկատամբ և յիշեն թէ մասամբ իրենց ևս կը վերաբերի Յովհաննէս Մկրտչի սուրբ խօսքն. «Նմա պարտ է ածիլ և ինձ մեղմանալ» Յով. Գ. 30:

Ծնողաց և զաւակաց վերայ խօսելն զկնի պէտք է յիշել նաեւ անզուտակ ծնողներն: Իսրայէլացեաց ազգին մէջ մեծ դժբաղթութիւն և նախատինք կը համարուէր եթէ մի ամուսնացեալ կին զաւակ չծնանէր: Այս էր պատճառն, որ երբ եղիտարթ յղացաւ, իւր օրերն անցուցած ժամանակին մէջ սկսաւ ուրախութեամբ ազգակիւլ. «Զի՞նչ գործ գործեաց ընդ իս Տէր, յաւուրս յորս հայեցաւ յիս բառնալ զնախատինս իմ մարդկանէ:» (Ղուկ. Ա. 25): Այսպէս էր Իսրայէլացեաց մէջ որոց համար օրէնք համարուած էր իրենց սերնդեան ընդունակութիւնն թէ՛ ընդհանրապէս և թէ՛ մասնաւորապէս: Իսկ քրիստոնէութեան մէջ այնպէս չէ: Զաւակ լինի կամ ո՛չ, ամուսնութիւնն չկորուսաներ իւր արժանաւորութիւնն: Չեմք կարող սակայն ուրանալ որ այս պարագային մէջ ևս անզաւակութիւնն տրտմութիւն կը համարուի և երջանկութեան պակասութիւն: Շատ անգամ անզաւակ ամուսններն կ'աշխատին իրենց տրտմութիւնը արտօնելու համար որբերէն հոգեզուակներ ընդունիլ և խնամել իբրեւ իրենց հարազատ զաւակներն: Այժմ խնդիր է խնամալ թէ արդեօք զաւակունք անպայման օրհնութիւն կը կազմեն իրենց ծնողաց համար: Ոմանք այն կը պատասխանեն այս հարցման եւ մինչեւ անգամ կ'ըսեն թէ որչափ բազմաթիւ են զաւակունք, այնչափ առաւել է և օրհնութիւնն, և ի հարկէ այս առարկութիւնը կը հիմնեն Իսրայ-

յէլի ազգին նկատմամբ եղած Հին կըտակարանի տնտեսութեան վրայ: Եթէ բազմազաւակութիւնն բացարձակ օրհնութիւն համարուէր, ուրեմն ազբատ վիճակի ամուսնութիւններն աւելի օրհնութիւն պիտի համարուէին, քանի որ զաւակունք բազմաթիւ են: Սակայն եթէ մենք ուշադրութեան առնուք այս ամուսնութիւններն, որոնք ծանրաբեռնուած են հիւանդոտ և քաղցած զաւակներով, որոց ծնողք ոչ կարող են կերակրել և ոչ կարող են դաստիարակել, և որք միայն կը կերակրուին ողորմածասէրներու խնամքով, այն ժամանակ կը պարտաւորինք ասել թէ ամէն բազմազաւակութիւնն անպայման կերակրել օրհնութիւն չէ: Օրհնութեան պայմաններն այն են որ ամէն պարագային մէջ զաւակունք գտնեն հաց և հագուստ հայրենի տան մէջ և կարողանան դաստիարակուիլ Աստուծոյ տեսչութեան և պատուիրանաց ներքոյ: Անտուն և քաղցած մանկանց երամին մէջ դժուարին է գտնել որ և իցէ ընտանեկան օրհնութիւն: Մենք այնպէս կ'ընդունինք որ ճշմարիտ օրհնութիւնն այն ժամանակ է երբ զաւակունք, սակաւաթիւ կամ բազմաթիւ, միջոց ունենան կրթութիւնը, աճելու և օրհնութիւն թէ՛ յԱստուծոյ և թէ՛ ի մարդկանէ: Ըճմարիտ օրհնութիւնն այն ժամանակ է երբ բակիզն և կատարածն, ծնունդն և դաստիարակութիւն իրարու համապատասխանեն: Սակայն այս օրհնութիւնն ժառանգելու համար կան կարևոր պայմաններ, այն է զարգանալ անէժք ժառանգելու համար, և այս նպատակին հասնելու միակ միջոցն է կամաց ազատութիւնն ուղղել և ճշմարիտ գործունէութեան մէջ դնել: Քրիստոս կ'առնէ. «Կին յորժամ ծնանիցի՝ տրտմութիւն է նմա, զի հասեալ է ժամ նորա. այլ յորժամ ծնցի զմանուկն, ոչ եւս յիշէ զնեղութիւնն վասն խնդրութեան, զի ծնաւ մարդ յաշխարհ:» (Յով. Ժ. 21):

(1) Շար. տես թիւ 4:

Քրիստոսի ակնարկած ուրախութիւնն այն է որ երբ մարդն կը ծնանի նոր կեանք սկսելու, այդ կեանքին մէջ կը պարունակի անվախճան ուրախութիւնն: Մայրական աչքն կը տեսնէ իւր զաւակին մէջ մարդոյ փառքն, այն փառքն որուն համար կոչուած է և որուն տակաւին տիրացած է: Այս ուրախութիւնն տակաւին հաստատուն ուրախութիւնն է և կարող է փոխուիլ ի տրամութիւն: Երբոր կայէն ծնաւ, Եւա ուրախացաւ և ցնծացաւ, որովհետեւ այնպէս կը կարծէր որ ուրախութեան և ուխտի զաւակ ծնած է, և սակայն նա եղև մօրն համար միայն վիշտ և տրամութիւն: Երբ ծնաւ Ափիսոզոմ, նոյնպէս և ուրախացաւ Դաւիթ իւր որդւոյն համար, բայց այս ուրախութիւն ի տրամութիւն փոխեցաւ՝ երբ Ափիսոզոմ ապստամբեցաւ իւր հօր դէմ եւ խռովեց Դաւիթի տունն: Երբ ծնաւ Յուդայ իսկարիովտացին, նոյնպէս ուրախութիւն եղաւ որ մարդ ծնաւ յաշխարհ սակայն նա եղաւ որդի անիծից և Փրկիչն նորա մասին այս խօսքն արտասանեց. «Լաւ էր նմա թէ չէր ծնեալ մարդըն այն»: Մատ. ԻԶ, ԶԿ: Ճշմարիտ և կատարեալ ուրախութիւնն այն է, որ մարդն իւր ծննդեանն սկսեալ ուրախութիւնն լինի իւր բոլոր կենաց ընթացքին մէջ և իւր պատմութիւնն իսկապէս վկայէ թէ նա հաղորդակից եղած է մարդկային կոչման վերաբերեալ փառքին և պատկած է իւր կոչումն: Այս է պայմանն ուրախութեան երբ կը ծնանի մանուկն և այս ուրախութիւնն կապուած է երկիւղի և սարսափի հետ: Որչափ բազմաթիւ են զաւակունք, այնչափ շատ է պատասխանատուութիւնը, զաւակունք պարգեւ են Աստուծոյ, բայց մենք պէտք չէ մոռնանք որ այս պարգեւն շուտով յառաջ կը բերէ մեծ և ծանր խնդիր, զի մէն մի նորածին զաւակի հետ կը ծնանի նոր խնդիր: Այս կէտն պարտաւոր են ուշադրութեան առնուլ ինչպէս բազմազաւակ ծնողքն, նոյնպէս և անզաւակքն: Ամուսնական վիճակին մէջ գտնուող կիսն անտարակոյս խորին և բնական փափաք կը սընուցանէ զաւակ ունենալու համար, բայց եթէ նորա փափաքն և ջերմ աղօթքն չկատարուին, պէտք է որ ինքն իրեն այս հետեւեալ հարցումն ուղղէ. — ասպն՞ով ես որ քու փափաքած պարգեւը անպատճառ պիտի լինի կատարեալ օրհնութիւն քեզ համար. ասպն՞ով ես որ այդ պարգեւն պիտի չբերէ իրեն հետ քեզ համար մի դժուարին խնդիր, որոյ լուծելն աւելի պիտի մղէ քեզ ի տրամութիւն:

* * *

ՆԱԽԱՆՁԵԼԻ ՆՈՐՈԹԻՒՆ ՄԲ

Ներշնչուհեան վարժարանն եմք: Քիչ մը եզակի յոգնակի, քիչ մ'ալ թուաբանութիւն մտիկ ընելէ յետոյ, կարգը եկաւ թուրքերէնի քննութեան. յանկարծ դեռատի աղջիկ մը, դասագիրք ի ձեռին, սրահին մէջտեղը կը յառաջանայ եւ կ'սկսի բաւական յաջողակութեամբ կարդալ ու վերլուծել. զարմացման շարժում մը ամէն շրթանց վերայ. բոլորը միաբերան «Աղջիկները թուրքերէնի ինչ պէտք ունին» կը քրթմնչեն: «Ֆրանսերէնի ինչ պէտք ունին» հարցուցի մօտա գտնուողի մը. — «Այն ուրիշ, այն Ֆրանսերէն է»: Ինչ աղուոր պատասխան. բայց մի ծիծաղիք, շատ մը ծնողներ իրենց զաւակաց, մանաւանդ աղջկանց Ֆրանսերէն կ'ուսուցանեն առանց դիտնալու թէ ինչո՞ւ. նոքա պարզապէս մօտա կը հետեւին. իմ խոնարհ համոզումս սակայն այն է որ աղջկանց համար թուրքերէնը Ֆրանսերէնէն աւելի կարեւորութիւն ունի. բացատրեմ: Նախ, դաստիարակեալ մարդ նկատուելու համար եւրոպական լեզու մը գիտնալ անհրաժեշտ է, զի ի բաց առեալ մայրենի լեզուն՝ միւս լեզուները մեր դաստիարակութեան մասը չ'են կազմեր. մենք ընդհանրապէս լեզուները կը սովորեմք երկու գլխաւոր պատճառներով. նախ՝ կառավարական, վաճառականական եւ ուսուցչական ասպարէզներուն մէջ մըտնելու եւ երկրորդ՝ մասնագիտութեանց հետեւելու, այլ խօսքով, դրամ օսնելու համար. առանձնաշնորհեալ էակներ պէտք է նկատուին անոնք՝ որք օտար լեզուի մը կը հետեւին պարզապէս գրեական հանոյթի համար. քանի որ մեր մէջ տակաւին կանայք կը մեղադրուին ուսուցչութենէ զատ վերոյիշեալ միւս ասպարէզներն ընդգրկելով, կը հետեւի թէ աղջկունք դրամ շահելու տեսակետով անպատճառ օտար լեզուի մը, օրինակի համար Ֆրանսերէնի, պէտք չունին. իսկ ամբողջ Ազգին մէջ գուցէ հազիւ գտնուին երկոտասանեակ մը աղջիկներ, որք գրական բարձր ճաշակաւ մը օժտուած, պէտք զգան օտար գրականութիւնը օտար լեզուաւ ուսումնասիրել. մանաւանդ որ, եթէ շատ իսկ լինէր նոցա թիւն, Ազգ. նախակրթարանաց մէջ աւանդուած գաղղիկերէնը հեռի պիտի լինէր իրենց պիտոյից գոհացում տալէ. կը հետեւի ուրեմն թէ աւելորդ ժամավաճառութիւն է Ազգ. նախակրթարանաց մէջ աղջկանց հինգ վեց տարի շարունակ Ֆրանսերէն դասասուսել. իրենց սովորածն պօսնուռ պօսնուռաւն և շատ շատ սիրեմ բայէն անդին չպիտի անցնի:

Գալով թուրքերէնին՝ արդէն ամենուն յայտնի է որ արք ամէն ժամ, ամէն վայրկեան հաց ու պանիրի պէս պէտք ունին անոր. երանի թէ այս ճշմարտութիւնը վարժարանին մէջ իսկ ըմբռնեն. բայց դառնանք աղջկանց. արդարեւ սոքա քեաքիպ չպիտի լինին, գործի մէջ չպիտի մտնեն, բայց նոյն իսկ իրենց սենեկին չորս անկիւններուն մէջ ալ շատ անգամ պէտք կ'ունենան անոր: Ամուսինդ, հայրդ կամ եղբայրդ կրնայ մէկէն սէնէտով պահանջը մը ունեցած լինել, կամ մէկուն հետ գօնքրաք մը կնքած և կամ անշարժ կալուածի մը հետեւէն պահած. ո՞վ չունի իւր սնտուկին մէջ այսպիսի մէկ կամ երկու պաշտօնական թղթեր որք, յայտնի է թէ թրքերէն են: Դիցուք թէ ամուսինդ, հայրդ կամ եղբայրդ մեռաւ և քեզ թողուց միայնակ. սնտուկը խառնած ատենդ երբ այդ թղթերէն գլուխնս՝ փոխանակ ապուշ ապուշ անոնց վրայ նայելու և բան մը հասկնալու համար ուրիշին կարօտ լինելու՝ լաւագոյն չէ՞ որ դու ինքդ քիչ շատ կարդալ գիտնաս ու քու գալտնիքդ քեզի մնայ, մանաւանդ որ խաբեբայից այսպիսի պարագայներու մէջ նիւթած խաղերէն զերծ մնաս: Անտէր կ'ին մ'ես և դասական գործ մ'ունիս, որքան որ ալ փաստաբանի մը կարօտ ես՝ լաւագոյն չէ՞ որ գիտցած թուրքերէնիդ զօրութեամբ օրինաց վրայ գոնէ նախնական հմտութիւն մ'ունենաս և ինքզինքդ բոլորովին անխիղճ մարդոց չյանձնես: Գուցէ առարկուի թէ այսպիսի պարագայներ քիչ անգամ կը ներկայանան. այդպէս ենթադրենք, բայց գոնէ այդչափն ալ չեմք կրնար ըսել եւրօպական լեզուի մը համար: Քիչ մ'ալ մօտա լեզուով խօսինք. Ֆրանսացիները կը սիրեն, թէպէտ առանց պատճառը գիտնալու. արդ ի՞նչ պիտի ըսեն քեզ Ձերանասցիք երբ իմանան թէ փոխանակ նախ քթիդ տակը եղած առարկայները սովորելու՝ քեզմէ հազարաւոր արեւմտեւրով հետու եղած բաները կը սովորիս, զի գիտցի՞ր որ անոնց մէջ մօտա է նախ իրենցը և ապա օտարինը սովորիլ:

Թուրքերէնի ուսուցման մէջ ուրիշ առաւելութիւն մ'ալ կայ. լեզուն խօսիլը արդէն գիտեմք. մեր պէտքն անմիջական կերպիւ գոհացնելու համար կը մնայ քիչ մը գրել կարդալ, քիչ մ'ալ քերականական գիտելիք. մինչ եւրօպական լեզուի մը համար նոյնը չենք կարող ըսել. խօսիլ ալ պիտի սովորինք միանգամայն, ինչ որ ամենէն դժուարինն է և առանց որոյ առջի յիշուածներն մեծ օգուտ մը չունին:

Ուրեմն բոլոր այս տեսակէտներով լաւագոյն է թուրքերէն ուսուցանել աղ-

Ջրկանց քան մի ո՛ր և է եւրոպական լեզու . կարծեմ ցարդ Ներշապուհեանէն զատ ուրիշ ոչ մէկ վարժարանի մէջ ալ Ջրկանց Թուրքերէն կ'աւանդուի . յիշեալ վարժարանին ընծայած նորութիւնը կ'արժէ որ այլոց եւս օրինակ հանդիսանայ .

Մաքրիգիւղ

12 Նոյեմբեր 1891

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ Ս . ԵՐՈՒՍԱՂԷՄԻ(1)

255

Խափանուովն պատարագելոյ Լատինաց յեկեղեցւոյ Ս . Յակոբայ եւ Ս . Փրկչի : Այրուովն Ս . Այրին Բեթլէէմի, յորմէ գողանան եւ պատկերէ Հայոց : Գալուս Միւնիք Էֆէնտոյ, եւ խորհուրդ վասն խնդրոյ Ս . Տեղեաց, Անկուովն Կարապետ Եպիսկոպոսի ի փակակալութենէ եւ յաջորդել Իսանակայ Եպիսկոպոսի :

Յաւուրս սորին իսկ Եսայեայ պատահէ դարձեալ դժտութիւն ի մէջ Հայոց և Լատինաց ի պատճառս պատարագելոյ սոցա յեկեղեցւոյ Ս . Յակոբայ և Ս . Փրկչի : Չունիմք ստուգագոյն ինչ գիտեալ եթէ յորժամ դարու սկիզբն կալան Լատինք կատարել յեկեղեցիս Հայոց ըզխորհուրդն աստուածային : Ի հետագօտեալ մեր պժամանակաց պատմութիւնս և զգիրս յիշատակաց, գտանեմք ի թուղթս Գրիգորի Շղթայակրի գրեալ առ թաղաւորն Գաղղիացոց, զոր ի մէջ բերաք վերագոյն, յորում ասէ, եթէ ի սէր եղբայրութեան թողումք կատարել Լատին կրօնաւորաց զսուրբ Խորհուրդն յերկուսին խորանս : Գտանեմք և առ Մարինոսի պատմագրի, որ երկցագոյն է քան զՇղթայակր ժամանակաւ որոյ զվանաց և զեկեղեցւոյն Ս . Յակոբայ խօսելով՝ ասէ, եթէ միանգամ ի տարեմ պատարագեն անդ ի թոյլտուութենէ Հայոց (2) : Ապա յայտ է, եթէ անդրադոյն է քան զերկերիւր ամս սովորութիւնս այս : Եւ զի ի թոյլտուութենէ Հայոց կատարեն և ոչ յիրաւանց, յայտ անտի է, զի միով աւուրբ յառաջ քան զտօն Ս . Յակոբայ, որ պատահէ յ13/25 ամսեանն Յուլիսի, եկեալ թարգմանին Լատինաց ի վանս Հայոց առ աւագ թարգմանն, խնդրէր զսովորական թոյլտուութիւնն, և ապա զկնի կիսաւոր՝ ածեալ զերգեհոնն՝ ըսկըսանէին զնախատօնակն, և յերկրոր-

դում առաւօտու զխորհուրդ պատարագին առանց մեծի հանդիսի կատարէին առաջի հասարակ ժողովրդեան իւրեանց ուր ոչ ոք ի պաշտօնէից եւրոպական տէրութեանց ներկայ գտանէր :

Իսկ ի հասանել 1867 ամին, յորում ժամանակի յեզրագոյն գտանէր Պատրիարքն, հիւպատոն Գաղղիացոց Եղմոնդ տը Բարէր, այր կրօնամուլ յաւէա քան թէ կրօնատէր, և գողուցամիտ, գժտմնեալ ընդ ումեմն Հայոց, որ էր քարտուղար հիւպատոսարանին Աւրատրոյ, այր զօրաւոր յազգի իւրում և մեծարոյ առաջի տեղակառն կառավարութեան, ի հեծուկս սորին խնդրեալ ի Բեթլէէմի վաշտ մի զինուորաց, գայ ի նմին աւուր տօնի յեկեղեցին Հայոց, Միաբանական ուխտն չեղեւ ընդ սոյն ընթացս նորա ուշադիր, և զի՛ անակընկալ էր գալուստ նորին : Այլ ի գալ ամին միւսոյ և ի մօտեալ աւուրց տօնին, լուեալ Եսայեայ եթէ հանդերձեալ է նա զինուորական հանդերձանօք դալ դարձեալ և աթուռ եւս վասն իւր ածեալ անդր, ազդ արար բեթլէէմին, խնդրելով արգելել զհիւպատոն յայօրինաւոր ընթացից, որ հակառակ էր եթէ սովորութեան տեղոյն և եթէ կանոնաց տէրութեան, քանզի համարի այնու ըզՀայս իբրու ապտամբս և զՄիաբանութիւն՝ կասկածաւոր և զաւազիր անձին իւրոյ : Իբրեւ ետես եթէ անկարանայ բեթլէէմի դարձուցանել զհիւպատոնն ի խորհրդոց իւրոց, զոր և միամտաբար ի պատիւ Միաբանութեան համարէր զինուորական գալուստ նորին, խորհեցաւ Եսայի խնամանակէս, առ գլտանել հնարս խափանելոյ զգալուստ նորա, կանխել քան զհիւպատոն խնդրել ի բեթլէէմին քանեակ մի զինուորաց, կալ առ դրան վանաց յերեկոյի և յառաւօտու տօնին : Յաջողեցաւ Եսայի յայսմիկ անդր քան զոր չունէր ակնքանզի ոչ միայն յետս եկաց հիւպատոն խալառ ի զիտաւորութենէ իւրմէ, այլ և առ ի ծածկել զճախողակի նպատակ խորհրդոցն, որ ի վնաս Հայէր իրաւանց Ս . Աթուոյն, (իբրու եթէ պատարագել անդ Լատինաց ոչ եթէ հրամանաւ և հաճութեամբ Հայոց իցէ, այլ տիրարար և զօրութեամբ արքունի ինչ հրամանաց) : վասն այնորիկ իութայ առաքել զթարգման իւր առ Եսայի Պատրիարք, խնդրելով ի նմանէ զի մի ի թիւր միտս մեկնեսցէ, կամ ի թշնամանըս ունիցի զոր ինչ կամեցան առնել, այլ յաւէտ ի պատիւ Միաբանութեան համարիցի :

Յայս վայր ոչինչ ընդ միտ տանէր Միաբանութիւնն և ոչ հակառակութիւն ինչ ցոյց տայր Լատինաց վասն պատարագելոյ նոցին : այլ իբրև հովիւր միւս

ևս ամ, Լատինք, որք ի վաղուց խորհէին տիրել Ս . Այրի Ծննդեան, յանկարծ ի բոց մատնեն ի գիշերի միում (25 Ապրիլ 1869) զվարագոյրն, որ ծածկէր համակ զառաստաղ Այրին : Չոգան անդ ի քննութիւն բեթլէէմի և Պատրիարքունք Հայոց և Յունաց, և զի ընդ վարագուրաց այրեալ էին և ամենայն պատկերք եւ կանթեղանի, ածին Հայք և Յոյնք այլ պատկերս՝ դնել իւրաքանչիւր ի տեղեմ իւրում : Ընդ այս ի վեր երեւեալ Լատին կրօնաւորաց, պաշտպանութեամբ հիւպատոն Չանան արգելել նոցա կանգնել զերկուսին պատկերսն զոր ունէին Հայք եւ Յոյնք յաջմէ եւ ի ճախոյ սեղանոյն, զորոց պընդէին Լատինք եթէ չունիցին իրաւունս առ այն : Իսկ բեթլէէմի եւ որ ընդ նմա զօրագետն եւ այլք գիտելով զիրաւունս Հայոց եւ Լատինաց, հրամայեն դնել զամենայն պատկերսն և զկանթեղանի զանկեալսն : Իսկ խնդիր վարագուրացն մնայ անորոշ, զորմէ ստէր բեթլէէմի եթէ հարկ է երեցունց ազգաց միանգամայն նորոգել զայն հաւասար իրաւամբք : Հազիւ անցին աւուրք ինչ (8 Մայիս), եւ ահա գողացեալ լինին եւթանեքին պատկերք Հայոց եւ մի պատկեր Յունաց ի Ս . Այրին : և զի Լատինք էին հեղինակք զողութեան, առ չտալ զանձանց կասկածանս, քակեն եւ զմի ի բեւեռաց ճաճանչին իւրեանց : Հեռագրի առ օրին ի Գուան արքունի ի կողմանէ բեթլէէմի, և երկոցունց վանաց Հայոց եւ Յունաց ի պատրիարքարանս իւրեանց : քանզի Լատինք բռնացեալ չթողացուցանէին զետեղել այլ պատկերս : Ալ ի փաշա, վչ զիրն մեծ, թուլացուցեալ զխնդիրն, այլ ոչ յուսահատեցուցեալ իսպառ զՄիաբանութիւնն, յետ կրկնակի բողբոջ նոցա, ուր ուրեմն հրաման հասեալ ի 23 Յուլիսի, հաստատին երկու պատկերք և եթէ Հայոց և պատկերն Յունաց :

Իբրեւ զայսու խնդրով զբաղեալ կայր Ս . Աթուոն, եւ ահա յերկրորդել ամին (1870) երկրորդեն և Լատինք զբռնութիւն իւրեանց, միւս ևս այլ խոռվութեան և ցրտութեան ի մէջ արկեալ երկուց Միաբանութեանց : Հիւսիսային դուռն Այրին ի մասին իրաւանց հաւասար գոլով Հայոց եւ Լատինաց, իրաւունս ունէին ապա երկոքին Միաբանութիւնք աւելել եւ մաքրել զաստիճանս ընդ որ իջանեն ի Ս . Այրն : Եւ էր դաշնաւորեալ ի մէջ երկուց Տեսչաց և լուսարարաց ի վազ ժամանակաց փոփոխակի աւելել զեթնեակ մի աւուրս իւրաքանչիւր Միաբանութիւն : Լատինք, որք ի պատճառս խնդրոյ գերեզմանատան Սիօնի գժտմնեալ կային ընդ Հայս, առ ի վնասել իրաւանց նո-

(1) «Ծագելի» ներկայ թուով կ'սկսիմք հրատարակել վերջին երեք գլուխներն Պատմաւալանեանցի «Ս . Երուսողէմի պատմութեան» որ կը մնայ ցարդ անտիպ :
(2) Պատմ. Ս . Երկրի . հտ . Բ . գիրք Թ . գլուխ 12 .

ցին, արգելուն (6 Յուլիսի) աւելել ըզ-
 յիշեալ սաստիճանս ի կարգի իւրեանց,
 եւ ոչ իսկ սլատիառ կան հրամանաց բը-
 դեշտին, որ կամէր իրաւունս առնել
 Հայոց ի ձեռն գիւղապետին: Գրէ եւ
 առ հիւպատն պատուիրել սուաջնորդի
 վանացն Լատինաց չգործել ինչ հակա-
 առի, եւ թողուլ Հայոց ի գործ դնել
 զիրաւունս իւրեանց: Զիջանի սուաջ-
 նորդն, այլ ասէ. քանզի զեղծումն է
 զոր առնեն, աւելել զսաստիճանսն, թո-
 ղում յայլու պահու վարել դատ:

Տեսեալ Յասայեայ զի Միարանութիւնն
 Փրանկաց ոչ դադարէ յուզել նորանոր
 վէճս եւ խնդիրս սեփականութեան,
 յակամայս որոշէ ի մտի յետս առնուլ
 զչնորհն հինաւուրց, զոր սրարեալ
 Փրանկաց Ս. Աթոռն, այն է արգելել
 զպատարագել նոցա յեկեղեցիս իւր:
 Վասն որոյ ի գալ թարգմանին նո-
 ցա Պիոսի միով աւուրբ յառաջ քան ըզ-
 տոն Ս. Յակոբայ, յորում կատարեն
 զնախատոնակն, խնդրել հրաման ըստ
 սովորութեան, թարգմանն Հայոց ըստ
 կանխաւ պատուիրելոյ ինքեան՝ մերժէ
 զխնդիր նորին եւ յետս առաքէ զեր-
 գեհոնն: Խոսով ընդ այս վանահայրն
 Լատինաց եւ ամենայն Միարանութիւնն
 ընդ նմա. վուժայ զեկեղեցանել զայն
 հիւպատին, եւ սա բողոքէ առ կառա-
 վարութիւն: Իսկ Յասայի Պատրիարք
 նախ քան զնա ազգ արարեալ էր բդեշ-
 տին ի ձեռն թղթոյ զհերքումն իւր եւ
 զպատճառսն: Զբնագիր թղթոյս առա-
 քէ Քեամիլ փաշայ առ հիւպատն ի պա-
 տասխանի բողոքոյ նորին:

Աւասիկ թարգմանութիւն պատճէ-
 նին զրեալ գաղղիերէն յՍ Յուլիսի:

«Վսեմափայլ Տէր,

«Ի ժամանակաց ինչ հետէ Փրանկի-
 սկեան Հարք թոյլտուութիւն եւ շնորհս
 ընկալեալ էին ի Միարանութեանէս կա-
 տարել պաշտօն հոգեւոր խորհրդոյ մի
 անգամ ի տարւոջ յեկեղեցին մեր ի
 Մար Եագուպ:

Վիշտ է ինձ յայտնել Ձեզ, եթէ յայ-
 սըմնուագի անհնար է ինձ առնել նոցա
 զնոյն շնորհ, ի սակս պատճառաց ինչ
 որ կրօնականք են գլխովին, որոյ վասն
 հրահանգս ընկալեալ է իմ յաւուրս
 յայտնիկ ի կողմանէ սրբազան Վեհին,
 որ է զլուս ազգային եկեղեցւոյ մերոյ:
 Յոյր սակս փութամ ազգ առնել Ձեզ,
 Վսեմափայլ Տէր, զի հաճեալիք ոչ եր-
 րեք ընդունել զմիջնորդութիւն ի կող-
 մանէ հիւպատիոյ մատուցեալ, որպէս
 եւ մերժեցի արաքայ գաղղի գործն
 իմոյ իրաւասութեան: Այսու պատե-
 հութեամբ կրկնեմ զպարտանս իմ որ
 վասն կարգադրութեան իրաւանց մե-
 րոց ի մասին աւելելոյ զսաստիճանս ե-
 կեղեցւոյն Բէթլէմի:

« Հաճեալիք ընդունել, Տէր, զյայտ-
 նութիւն բարձու ակնածութեան իմոյ:
 Եսայի Պատրիարք Հայոց Եղիմի:»

Ի նմին երեկոյի հեռագրեն Լատինք
 ի Կ. Պոլիս եւ ի Հռովմ առ պատրիարքն
 Յովսէփ Վալէրկայ: Նոյնպէս եւ Եսայի
 Պատրիարք փութայ հեռագրել ի մայ-
 րաքաղաքն առ փոխանորդ իւր:

Յերկրորդում առաւօտու բազմու-
 թիւն ժողովրդեան խուռն դիմեն ի վա-
 նըս Լատինաց, յորոց սախաւ Փրան-
 կիսկեան կրօնաւորաց փութան առ հիւ-
 պատն Լա Բարէր եւ բռնադատեն զնա
 հնարս զօրաւորագոյնս ի գործ դնել առ
 ի ձեռս բերել զկարծեցեալ իրաւունս
 իւրեանց առ օրին իսկ պատարագելոյ.
 Եւ ընդունին ի նմանէ պատասխանի, ե-
 թէ չէ նա կարող առնել ինչ բռնու-
 թեամբ: Յայնժամ ի միաս եկեալ կրօ-
 նաւորաց, զղջացին յոյժ ընդ անիրաւ
 գործան զոր ընդդէմ իրաւանց Հայոց
 գործեցին ի Բէթլէմի, խոնարհեցան
 անկան երեսք նոցա, եւ զցոլովս կալան
 միջնորդ առ Պատրիարքն Հայոց մեղ-
 մել զխոտութիւն իւր, եւ ոչ կարացին
 շահել զնա եւ ամել զիւրեամբք. թէ ե-
 խոտացան սիրով վախճան տալ խնդ-
 րոյն Բէթլէմի: Յայնժամ Եսայի Պատ-
 րիարք յայտ արար միջնորդաց, եթէ հեր-
 քումն իւր կատարելոյ Լատինաց զհո-
 գեւոր պաշտօն իւրեանց իցէ պարզա-
 պէս կրօնական, այն է նոր վարդապե-
 թիւն վերջին ժողովոյն Հռովմայ դու-
 մարելոյ ի նմին ամի, յորում վճիռ ար-
 ւաւ անխաղաղութեան Պապին. եւ զի ե-
 կեղեցին Հռովմայ հերձուածողս համա-
 րի զայնոսիկ յազգաց որք չընդունին
 զվարդապետութիւնս նորս, վասն որոյ
 եւ ուղղափառ եկեղեցին Հայաստան-
 եայց փոխադարձապէս ի հերձուածողս,
 մանաւանդ եթէ ի հերետիկոսս նկատէ
 զայնոսիկ որ արտաքոյ Ս. Գրոց յաւե-
 լուածս առնեն, եւ զստորագելանս սա-
 տուածային մարդոյ մահկանացուի ըն-
 ծայեն: Այդ վարդապետութիւն, ասէ,
 անջրպետ մեծ արկ ի մէջ երկուց եկե-
 ղեցեացս, մանաւանդ զի, յաւել նա,
 լսեմ եթէ եկեղեցականք այդ ոքիկ յա-
 տենի եկեղեցւոյս ի քարոզութիւնս իւր-
 եանց յայտնապէս հերձուածս կոչեն ըզ-
 մեզ. վասն այսոցիկ պատճառաց անհը-
 նար է ինձ թողուլ թշնամանել զսուրբ
 եւ զանարատ եկեղեցին իմ: Իրաւացի
 համարեցան պատճառարանութիւնք
 Պատրիարքին. ոչ եւս ոք համարձակե-
 ցաւ երկրորդել զխնդիրն. եւ նոքին իսկ
 ժողովուրդք եկեղեցւոյն Լատինաց ի
 վերայ հասեալ ապօրինաւոր ընթացից
 ուխտի եկեղեցւոյ իւրեանց, իրաւունս
 տային Հայոց: Վասն այնորիկ Եսայի
 Պատրիարք ոչ միայն մերժեաց ընդու-
 նել զմիջնորդութիւն նոցա, այլ եւ զանց

արար զհրամանօք մեծի Վեհրին Ալի
 փաշայի: Ի միւսում ամի (1871) մերժե-
 ցան նոքա եւ ի վանաց Ս. Փրկչի, ուր
 սովորութիւն ունէին գալ հրամանաւ
 Ս. Աթոռոյն եւ կատարել զխորհուրդն
 սաստուածային յերկրորդում աւուր Պէն-
 տէկոստէի:

Այս ամենայն գժտութիւնք եւ վէճք
 աղգային իրաւանց որ յերկուց եւ յերկուց
 ամաց անտի յուզէին զՄիարանութիւնս
 Հայոց, Յունաց եւ Փրանկաց, եւ հե-
 առաքիրք ի վերայ հեռագրաց յաճախէին
 ի Դուռն արքունի, հարկեցուցին զտէ-
 րութիւն առաքել զՄիւնիֆ Էֆէնտի ի
 քննութիւն եւ ի կարգադրութիւն այլե
 այլ խնդրոց: Եւ եղև սկիզբն քննու-
 թեանց (24 Աւգոստոսի 1870) յատենի
 յիշեալ Էֆէնտոյն երկուց Պատրիար-
 քաց՝ Հայոց եւ Յունաց, ուր առաջակայ
 եղև եւ կառավարիչն Երուսաղէմի Քեա-
 միլ փաշայ եւ ընդհանուր կուսակալն
 Դամասկոսի Բէշիտ փաշայ, որ խորհըր-
 դով արքունի Դրան հասեալ կայր ան-
 դըր ընդ հիւպատին գաղղիացւոց: Իսկ
 ի կողմանէ պատրիարքին Լատինաց եկ-
 եալ էր մի ոմն յեկեղեցականաց անտի
 իւրոց հանդերձ թարգմանու ուխտին
 Փրանկիսկեանց: Ի սմին աւուր ի քնն-
 նութիւն մատուցաւ խնդիրն քառաս-
 նից Այրին. եւ աման ի տես եւ յընթեր-
 ցումն հրամանագիրք եւ վաւերական
 թուղթք իւրաքանչիւր Միարանութեան
 Հայոց եւ Յունաց: Իսկ Լատինաց, որ-
 պէս յայտ է, էին վկայութիւնք եւ գիրք
 ուղեւորութեան ոմանց երեւելի ուխ-
 տաւորաց նոցին: Ի դերեւ ելին ամե-
 նայն ջանք ժողովոյն առ ի տալ արդա-
 րացի վճիռ յորտումն հինաւուրց խնդ-
 րոյն, թէպէտեւ իրաւունքն Հայոց եւ
 Յունաց ակն յանդիման երեւէին, այլ
 արդարութիւն առ տկարութեան դան-
 դաղէ եւ դեղեւէ տալ զվճիռ իւր: Այն-
 պէս մնացին անորոշ միւս այլ ամենայն
 խնդիրք, այն է գերեզմանատան Սիօնի
 եւ պատարագին Լատինաց:

Բազում փոյթ ի մէջ ամ հիւ-
 պատն Դամասկոսի առ ի հաւանեցու-
 ցանել զՊատրիարքն Հայոց թոյլտարել
 ըստ սովորութեան կատարել Փրանկիս-
 կեանց զխորհուրդն սաստուածային յե-
 կեղեցիսն Ս. Յակոբայ եւ Ս. Փրկչի,
 այլ ոչ յաջողեաց ամել զիւրեւ զպիտ
 Պատրիարքին, որ եկաց հաստատուն ի
 մտի իւրում: Քանիցս անգամ առանձինն
 ելանէր նա ի վանս Հայոց առ Պատ-
 րիարքն Եսայի, ուր առաջակայ զը-
 տանելի եւ ես թարգմանութեան սակս
 եւ զամենայն ճիւզն իւր թափէր առ ի
 հաւանեցուցանել զնա, խոստանալով
 յետ այնորիկ դիւրել լուծել զմիւս այլ
 խնդիրսն: Այս ամենայն բանք եւ ժո-
 ղովոցն որ ի սոյն սակս գումարեցան,

եւ քննութեանցն որ եղեն ի ձեռն Միւնիֆի Էֆէնտուոյ, եւք կատարածի, ո՛չ ահա գրեալ են ի նմին իսկ Պատրիարքէ հանդերձ առաւելութեամբ բանից(1):

Ա եք, քանզի ոչ յարգիւնս աման ժողովոցն քննութիւնք եւ ոչ լուծումն ընկալան արդարութեամբ, վասն այնորիկ չկամովք յերկարել ի նոսին մանրախուզիւ: Այսչափ ինչ յաւելումք ասել, եթէ Փրանկիսկեանք ի ժամանակէ անտի յորում մերժեցան ի կատարելոյ խորհուրդն աստուածային յերկոսին եկեղեցիս մեր, ոչ դադարեն և ոչ դադարեացեն հետամուտ լինել կրկին ի ձեռս բերել վարտօնութիւն զայն, ձանձրացուցանելով զդեպքանատունն Գաղղիոյ և զարքունի Դուան, որպէս արարին իսկ ցամն 1872, մինչեւ հեռագրել արքունի Դրան առ Քեամիլ փաշայ զի թողցէ Պատրիարքն Հայոց կատարել Լատինաց զսովորական ժամ աղօթից իւրեանց ի յիշեալ մատուոնս: Զնոյն հարկեցաւ թեւ զարեւ և Մկրտիչ Պատրիարք Կոստանդինուպոլսի, որոյ վասն անկաւ ընդ մեզաբանօք եւ ընդ քննադատութեամբք աղգային օրաթերթից: Իսկ Եսայի Պատրիարք քաջութեամբ վարեցաւ և յայս նուագ, հաստատուն կացեալ յորում մտաց իւրոց, եւ անցոյց զիւրեւ զհրաման տէրութեան:

Մինչդեռ Ս. Աթոռն յուզէր ի վէճս ընդ այլոց Միարանութեանց, ի ներքին շփոթից եւս խռովէր երբէք երբէք, որ էր նշան տկար եւ անզօր տեսչութեան: Էր յաւուրս ժամանակացս այսոցիկ փակակալ Ս. Յակոբայ եկեղեցւոյն Կարապետ եպիսկոպոս ի Մարզուանայ, որ յառաջ քան զԵսայի կոչեցեալ էր ի վարդապետութիւն եւ ձեռնադրեալ յեպիսկոպոսութիւն նախ քան զպատրիարքանալ նորին: Ունի ուսումն չարիւսարարաբերն գիտութեանց եւ զկրօնին, այր ոչ դուզնաքեայ բանիւ եւ գրով, վասն որոյ եթէ ոչ իսպառ առ նախանձուն, գէթ առ խակութեան գործոց Պատրիարքին, որով վարէր երբեմն, գժամընէր և յար ի խժդան կայր: Իբրև զայրացան նոցա սգիք, եւ արտաքոյ քան զսահման բանին վազէր Կարապետ եպիսկոպոս ընդդէմ անձին Եսայեայ, անդէն ի ժողով գումարեալ զՄիարանութիւն իւր, յայտնէր նմա զորոչումն մտաց իւրոց, եւ առեալ զնորին հաճութիւն, ձգէ զնա ի պաշտօնէ, եւ փոխանակ նորա կարգէ զԳառնակ եպիսկոպոս ի փակակալութեան (9 Հոկտ. 1869): Եւ քանզի, որպէս պատրիարքութիւն երուսաղէմի, նոյնպէս եւ փակակալութիւն, որ առաջին է ի պաշտամունս զկնի պատրիարքութեան, ցկեանս տե-

(1) Այն է Քննիչ Սրբազան Տեղեաց և նոս պաշտանական քննութիւնք. ապ. 1871:

ւէ, եւ ոչ ուրեք ի գիրս գտանեմք փոփոխութիւն լեալ առ կենօք նոցին, վասն որոյ տարօրինակ համարեցաւ անկումն Կարապետ եպիսկոպոսի: Իսկ նա համարեութեամբ տարաւ այնմ, եւ լաւագունի իսկ եղեւ պատճառ փոփոխումն այն, զի ի պարապել նորա ի բազմագրազ գործոց պաշտամանն, ետ այնուհետեւ զանձն անզբաղ մտօք հանապազորդել յայլ գործս, անդամակցելով խորհրդոց եւ մասնաւոր յանձնաժողովոց կարգելոց առ ի պէտս կարգաց ինչ Ս. Աթոռոյն: Նմա յանձնեցաւ նախաւորութիւն ի մէջ ժողովոյն որ հաստատեցաւ ի քննութիւն տասնամեայ հաշուոց Ս. Աթոռոյն, որոյ գլխաւորութիւն յարդ եւս յապաղէ ըզՄիարանութիւն հանել զնոսա ի հըրապարակ եւ ցուցանել զորինաւոր աղբիւրս պարտուցն: (Շարունակելի)

ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ԽՆԴԻՐ

Տէր Խմբագիր,

«Մալիկ»ի կողմ թուով տպուած մեր գրադասական յօդուածին մէջ մեր ուղղագրութիւնն ինչ ինչ փոփոխութիւններ կրած էր. կը խնդրեմ ուղղել, որպէս զի հակասական դանուած չըլլանք մեր տեսութեան մէջ: Ինչպէս ոմանք կ'ընեն, մենք չենք գրեր երբէք կ'իլնէր, ելնելով՝ վասն զի առ ձեւերն անբընական ու բունական են, և գիտենք որ ելանել բայն ա ձայնաւորն իյնալով ելնել ձեւն առած առեն՝ և ալ լի դարձած եղած է ելնել, ինչպէս կ'իլնել, քլլալ բալլիք և այլն:

Դարձեալ երբէք չենք գրեր մենք սովիլ (սովիցնել), այլ սորվիլ. վասն զի սովորել հին ձեւն՝ ո ձայնաւորն իյնալով սովիլ ըլլալու ժամանակ՝ վրքովք չկարենալով կենալ իբրև դժուարաւոր՝ ր առաջ անցած և աս կերպով գիւրինցած է արտաբերութիւնը: Նոյն տեղափոխական բնական երեւոյթը ր, լ, ղ, ձայներուն քով յաճախ կը դիտուել՝ նաև մեր ամենահին գրաւոր լեզուին մէջ: Արսաւոք, եղբայր, աղբիւր, և այլն, որոնց վրայ արդէն խօսած ենք այլուր, նոյն օրէնքով յառաջ եկած բառեր են:

Արդի լեզուն յարգող և անոր գոյութիւնը ձանջցող գրագէտ մը չի կրնար երբէք կը յուսամք գրել՝ արհամարհելով կամ անգիտանալով կը յուսամք օրինաւոր ձեւն, որ յառաջ եկած է լեզուն աւելի սահուն ընելու բնական միտութեան: Չի կրնար մէկն ուրանալ թէ աւելի դիւրաւ կը հնչուել և քան թէ մ' ֆ ի սուղեւ:

Մենք գրած էինք կիսադուրբիւն, տպուած է կիսադուրբիւն:

Մեր յօդուածին մէջ իբրև խորշիկի նշանակեցինք չը գրուիր (չի գրուիր), չխորշիր (չի խորշիր) գրութիւններն: Նոյնպէս swսուերկու, swսուերեք գրած էինք և կը տեսնենք որ swսուերկու, swսուերեք տպուած են: Վերջապէս կը գրենք կը սպասէինք, չուեի, և ոչ կ'սպասէինք, չ'ուեի, ապաթարցով, ուր՝ ձայնաւորի կրճատում չգտնուելով՝ առ նշանին գործածութիւնն անտեղի է:

Կարծենք յօդուածագիրն իրաւունք ունի գանդատելու առ փոփոխութեանց դէմ, որոնք յօդուածին էական կէտերուն վրայ ըլլալով մեծ կարևորութիւն ունին: Զ. ՍԵՐ. ՏԵՐՎԻՇԵԱՆ

Լեզուաբան յօդուածագիրն գանդատը բոլորովին անտեղի լինելով հանդերձ, ի յարգանս իւր կը հրատարակեմք իւր նամակն: Իւր նշանակած փոփոխութեանց մէջ կան մի քանիներ որոնք պարզապէս տպագրական սխալներ են, օրինակի համար՝ կէսադուրբիւն, փոխանակ կիսադուրբեան: Բայց կան փոփոխութիւններ ալ զորս յաակապէս ըրած եմք, յօդուածին ուղղագրութիւնը յարմարցնելու համար «Մալիկ»ի ընդհանուր ուղղագրութեան, ինչպէս մեր սովորութիւնն է ընել անխափ որ և է յօդուածի համար, եթէ ո՛չ բարեւրնեան խառնակութեան տարբերութիւն չունենար «Մալիկ»ի ընդհանուր պարունակութեան լեզուն և ուղղագրութիւնը: Այսպէս, մեք կը գործածեմք ելնել, կ'իլնել, սովիլ, և այլն, ձեւերն, և ո՛չ հասարակութեան լեզուին մէջ գործածուած ելնել, կ'իլնել, սորվիլ ձեւերն զորս սխալ կը համարուիք: Չը գիտեմք թէ ի՞նչու պարտաւորուած պիտի լինիմք հասարակութեան լեզուին մէջ գործածուած ուղղագրական ձեւերը գործածել գրականութեան մէջ. եթէ այդպէս երթանք, պէտք է գրենք ո՛չ թէ swսուերկու, swսուերեք, ինչպէս կը գրէ յարգելի քննադատը, վասն զի հասարակութիւնը այդպէս չարտասաններ, այլ պէտք է գրենք swսիւերկու, swսիւերեք, վասն զի այս վերջին ձեւով կ'արտասանէ հասարակութիւնը: Գանդատին աւելորդ էր. այդ փոփոխութիւններն ընելով մեք մեր պարտքը կատարեցինք միայն, «Մալիկ»ի մէջ պահպանելու համար ուղղագրական միօրինակութիւնը:

Պարահանդէսին մէջ յաճախ կը կնքուին ամուսնութիւնք, պարահանդէսին մէջ դարձեալ կը քահանայ ամուսնութիւնք:

— Գեղեցկութիւնը առաջին նուէրն է զոր կուտայ բնութիւնը, եւ առաջինն է զոր կ'առնէ:

ԱՐՁԱԿ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

Ս Ի Ր Ե Ր Գ

Օր մը կոյրն Երոս(1) փողոցին մէջ ծաղր ու ծանակ եղած էր բոլոր զինք զխտոզներուն, ու կը սողար պատերուն տակ:

Կը սայթաքէր, կը դողդուար, կ'ինկնէր, կ'եղնէր, նորէն կ'ինկնէր ու տըլմաթաթաւ կը լինէր: Զնա այսպէս տեսնելով, գթացի վրան, ու կրցածիս չափ արագ վազելով, գնացի բռնեցի ձեռքէն, վեր առի, ու առաջնորդեցի զինքն հանդարտօրէն:

Յանկարծ կանգ կ'առնու, ու գետնին վրայ կը տարածուի, կարծես մօտ է աւանդելու իւր վերջին շունչը:

« Բարեկամ, կ'ըսէ, խիստ վատտակարեկ կ'զգամ զանձն. ուսերուդ վերայ առ զիս, ու ճամբան շարունակեմք: Կը ծռիմ, շարակա կ'առնեմ զինք, իւր բազուկները վիզիս շուրջը կը կապեմ, ու կը շարունակեմ յառաջանալ:

« Սիրելիս, կ'ըսեմ քիչ յետոյ, կանգ առնուիք. իջէ՛ք, եթէ կը հաճիք, որպէս զի ես ալ յոգնուած իմն առնեմ քիչ մը:

— Անկարելի է, բարեկամ, կը պատասխանէ, երբ մարդ անգամ մը սէրը կրէ յանձին, եթէ յոգնեցնէ կամ ճանձրացնէ իսկ, այլ եւս չիջնէր այն:»

Լերան մը վրայ, Սէրը և ես, ու իմ սիրեցեալս ու ժամանակն ալեհեր, չորսս մէկէն քայլելով վեր կ'եղնէինք: Զառիվերէն ելած միջոցին՝ սիրեցեալս կը յոգնէ՛ր, և սէրը մեզմէ յառաջ կ'անցնէր, ժամանակին հետ վեր մազլցելով:

« Կեցի՛ր, սվ Սէր, գոչեցի, մի՛ վազեր այդչափ արագ. իմ սիրեցեալս, իմ գեղեցիկ ընկերուհիս հիմակուց յոգնեցաւ:»

Այն ատեն տեսայ, որ բացին իրենց թեւերն, Սէրն ու ժամանակը, ու ըսկըսան թռչի՛լ, թռչի՛լ:

« Բարեկամք, ըսի, ո՛ր կը վազէք, ինչո՞ւ կ'աճապարէք այսքան:»

Այն ատեն սէրը դէպ ինձ դառնալով պատասխանեց:

« Ես սովորութիւն ունիմ ժամանակին հետ թռչելու:»

Թարգ. ԱՌԵՏԻՍ Թ. ԿԵԶԻՒՐԵԱՆ(2)
Իւսկիւտար
12 Նոյեմբեր 91

(1) Երոս կամ կուպիդոս սիրոյ շատուածն էր բնութագրողը: Կ. Թ.

(2) Եթէ կեղծ ստորագրութիւն գնել սովոր չունէի, կ'ստորագրէի. « հեղինակեց ՅԱՆԹԱՂԻՍ՝ կամ որ նշան է պարզապէս « ՅԱՆԹԱՂԻՍ»: Կ. Թ.

Գ Ե Ն Ե Զ Ս Ա Ն Ք Վ Կ Ր Պ

Շիրմին սրգակիր
Դու սրբում վարդ,
Ըզեզ չեմ քանի
Սիրուհոյս զարդ:

Արեւուն կուգայ
Նրոյն նուաղ
Դու քրքիւն վրայ
Փըպսիլ խաղաղ:

Հովիկն ալ զուարթուն
Կուգայ մեղմիկ
Դու քերթիկներուն
Յունց սալ ցօղիկ:

Բայց վարդ մեծաւոր,
Տըժգոյն ես դու,
Ալ եզ չըկայ նոր
Կեանց առտու:

Անցան քաղցրագեղ
Օրերն սիրուն,
Սոխակն՝ իւր գեղգեղ
Թըռան հեռուն:

Դու ծրուէ շիրմին
Դըլխիկդ անտէր,
Թող ալ քափքրփին
Դու խեղճ քերթեր:
Վ.Ա.ԶՐԱՄ ՍՎ.Ա.ՃԵԱՆ

Զ Ո Ւ Ա Ր Ճ Ա Լ Ի Ք Ի Տ Ե Ղ

Ս Ա Բ Է Բ

Փրանսա կորուստ մ'ալ ունեցաւ յանձին Սարէքի: Լսած է՞ք այդ անունը. զարմանալի անձ մ'էր Սարէք. Թափառական մը, որ քառքիէ Լաթէճի մէջ աղմկալից կեանք մը վարելէ վերջ իսազառասէր պաշտօնեայ մը դարձած էր երկրորդական քաղքի մը մէջ: Սարէք նշանաւոր հանգիստացած էր իւր խեղկատակութեամբք եւ կծու կատակներով. իրեն համար մեծ գոհունակութիւն մ'էր արդարեւ իւր ժամանակակիցները խաբել: Ծանօթացնելու համար զինքը՝ կը բաւէ պատմել հետեւեալ իւր մի քանի քաջագործութիւնները:

Օր մը Սարէք ճաշարանի մը մէջ գիրուկ և լրջագէտ անձ մը կը նշմարէ որ անկիւն մ'առանձնացած կը ճաշէր. իսկոյն ներս կը մտնէ և հաշուակալին մօտեանալով, խորհրդաւոր կերպարանօք,

— Կը տեսնէ՞ք, կ'ըսէ, այդ անձը որ անկիւնը քաջուած առանձին կը ճաշէ. կը ճանչէք զինքն, այնպէ՞ս չ'է:

— Ո՛չ, պարոն, առաջին անգամն է որ...

— Ա՛հ, շատ լա՛ւ, գիտցէ՛ք թէ՛ յիմար մ'է՛ նա, եւ ես՝ ծնողացը կողմէ կոչուած եմ հսկելու իւր վրայ, միչո՞ւ և

ամենուրեք իւր քայլերուն հետեւելու եւ իւր հաշիւները կարգադրելու:

— Պատճա՞ռ:

— Որովհետեւ իւր պարտքերը վըճարելու համար հազար եւ մէկ դըժուարութիւն կը յարուցանէ, այնպէս կը կարծէ թէ դրամը կը գողնան, ուստի կ'սկսի սրտալ եւ ամբողջ իւր շուրջը ժողվել, կարճ խօսքով, ինձ ներկայացուցէք իւր հաշիւը որպէս զի վըճարեմ:

— Ա՛հա՛, ուրեմն:

— Շա՛տ լաւ, առէք ձեր ճաշագինը և այժմ, երբ հաշուեցուցալը խնդրէ, հաճեցէք ազդարարել որ սուանց աղմուկի հեռանայ իր գործին երթայ, ըսէք միանգամայն թէ ստիկանութեան լուր տրուած է:

— Շատ լաւ, Պարոն, շնորհակալ եմք ձեր հոգածութենէն:

Սարէք դուրս կ'եղնէ եւ պատուհանի մ'ետեւ ծածկուած՝ անձկանօք իւր որսին կ'սպասէ:

Վայրկեան մը վերջ լրջագէտ սարոնն իւր ստամբսին յազուրդ տուած լինելով, իւր հաշիւը կը հարցնէ. խիոյն պանդոկապետն յարգանօք անոր կը մօտենայ եւ ցած ձայնով մը,

— Ձեր հաշիւն կարգադրուած է, պարոն, հարկ չկայ հարցնել, կ'ըսէ իւր յաճախորդին:

— Ի՞նչ ըսել կ'ուզէք:

— Ձեր հաշիւը վճարուած է, Պարոն, եւ ձեզ կը մնայ մեկնիլ անձայն եւ անշուկ, կ'ըմբռնէ՞ք:

Յաճախորդն շեշտակի պանդոկապետին նայելով,

— Յիմար է՞ք, ի՞նչ էք, կը գոչէ անոր երեսն ի վեր:

— Պարոն, յիմարը ես չ'եմ, շուտ ձեր գործին գացէք, եթէ ոչ ստիկանատունը շատ հետի չ'է եւ արդէն ազդարարուած է:

Եւ նոյն հետայն գողոււմ, գոչում ամբողջ ճաշարանին մէջ. անարդանք, հայհոյութիւնք կը տեղան փոխադարձ, ծառայները կը միջամտեն եւ կը վանեն ըմբոստ յաճախորդը որ արդարեւ քիչ էր մնացած որ խելագարուէր... իսկ անդին՝ Սարէք անհուն հրճուանք կ'ըզգայ:

Օր մը, Սարէք, Մօն Մառթըը ծառուղոյն որոշեալ մէկ վայրը՝ կէս օրին՝ բոլոր կառքերը հինգ վայրկեան կեցընելու և անոնց երթեւեկութիւնն արգիլելու համար գրաւ կը բռնէ:

Իւր նպատակին հասնելու համար, Սարէք տրեղեայ գլխարկ մը կը հայթայթէ, ինչպէս նաեւ սալտակ և կարմիր ներկուած ուղղացիք մը, խոշոր եռոտանւոյ մը վրայ բարձրացած ան-

կիւնաչափ շարժուն կանոն մը և գետնաչափի շղթայ մը :

Իւր այս գործիները ծրարած , որոշեալ վայրը կը հասնի ուր ծառի մը ըստորտը ուղղացիցը կը հաստատէ , որու կը կապէ շղթային մէկ ծայրը և միւս ծայրն ալ ձեռացը մէջ առնելով ետ ետ կ'երթայ , կ'անցնի սահող ծառուղին , հրամայական շարժամբ մը կեցնելով ըստը կառքերն , եւ մեզմիւր բարձրացնելով շղթայն :

Երբ շղթայն մինչև ձիերու լանջից բարձրութեան կը հասնի , Սարէք , միշտ պաղարիւնութեամբ , առանց խի վերդողելու հետզհետէ խոնուող կառքերու ահռելի բազմութենէն , ո՛չ ալ կառապաններու հայհոյութիւններէն , կը լինդորէ իւր շուրջը դեգերող սպուշ պատանիէ մը որ հաճի վայրկեան մը շղթայն բռնել և ինքն ալ քիչ մը հեռուն եռտանուոյն վրայ հաստատելով անկիւնաչափ դործին , կը լարէ զայն և միւս փողցին վրայ կ'ուղղէ սպիտակ եւ կարմրաներկ ուղղացիցն , բազմազաղ դիմաք և շտապու թուանշաններ դըրելով հաշուետարի մը մէջ :

Բայց ահա յանկարծ երկու քաղաքապահ-զինուորներ բարկութեամբ գետնաչափին մօտենալով .

— Բայց ի՞նչ կ'ընէք , Պարոն , դուք ո՞վ էք որ . . . կը գոչեն :

— Ի՞նչ , իմ ով լինելա կ'ուզէ՞ք հասկընալ . . . Բարիզու քաղաքապետութենէն եմ . . . կը տեսնէք որ ծառուղոյն քարայտակներու կալուածատու մարը կազմելու զբաղեալ եմ :

— Բայց , Պարոն , դիտել կուտամք ձեզ թէ . . . :

Եւ ահա՛ վիճարանութիւնը կ'երկարի . բայց ինչ իոյթ , հինգ վայրկեանը անցած է արդէն և Սարէք գրաւը շահած լինելով , բոլորովին ուրախ , շղթայն կը քակէ և կը թոյլատցէ կառքերը որ կատարեն իրենց շրջանն :

Օր մը Սարէք նպարավաճառի մը ներկայանալով ,

— Ես , կ'ըսէ , Ասնիէւի Սիւլբիչիւս Կալպա Ծառուղոյն 37 թիւ հաստատութեան տնօրէնն եմ . . . Այդ գիշերօթիկ հիմնարկութեան լուսաւորման համար մոմի պէտք ունիմ , և մեծ քանակութեամբ , մօտ հինգ հարիւր ծրար մոմ կ'ուզեմ գնել : Բայց այդ յանձնարարութեան առաջ բնական է որ ձեր վտճառատանց մէջ գտնուած տեսակները զատ զատ պիտի ուզեմ փորձել : Հաճեցէք ուրեմն ձեր սենեցած տեսակներէն մէկ մէկ հատ ցոյց տալ ինձ :

— Մեր վաճառատանց մէջ գլուխուածներն , Պարոն , էթուսի , Պոն-Մէնի , Մատոնի , Յէնէքսի . . . գործա-

րանաց մէջ պատրաստուած մոմերն են , ընդ ամենը 32 տեսակ :

— Ետ լաւ , Գուցէ քիչ մը տարօրինակ թուի իմ առաջարկս , բայց անշուշտ կ'զգաք , Պարոն , թէ այդքան մեծ յանձնարարութիւն մ'ընելու համար , մարդ կը բաղձայ անդամ մը տեսակներն իրարու հետ բաղդատել և փորձել : արդեօք կարե՞լի է իւրաքանչիւր տեսակէն մէկ մէկ հատ ինձ յանձնել , որպէս զի բաղդատեմ իրենց լուսաւորութեան աստիճանը , այրելու եղանակը , տեղութիւնը և կանոնաւորութիւնը :

— Բայց չկրցայ լաւ ըմբռնել ձեր առաջարկը , Պարոն :

— Ետ պարզ բան , հաճեցէք ինձ յանձնել , կ'ըսեմ , իւրաքանչիւր տեսակէն մէկ մէկ հատ , որպէս զի անմիջապէս փորձեմ . . . հոս ձեր սչքին առջեւ պիտի վառեմ ամենքն ալ , և կըրնաք այժմէն վստահ լինիլ թէ որքան լաւ լինի տեսակը , այնքան մեծ պիտի լինի յանձնարարութեան քանակութիւնը :

— Ի՛նչ տարօրինակ մարդ , կ'ըսէ մտքէն նպարավաճառը : Սակայն հինգ հարիւր ծրար մոմ վաճառելու յոյսէն հրապուրեալ խնդիրքը կը կատարէ առանց շափազանց դժկամակութիւն յայտնելու :

Սարէք հաշուատեղանին վրայ երեսուն երկու մոմերը իրարու ետեւ կարգաւ կը շարէ , կը վառէ զանոնք , և ինքըն ալ կը նստի և ակնդէտ կ'սպասէ :

Եւ կ'սպասէ այդպէս երեք ժամ , երբեմն երբեմն իւր ժամացոյցը նայելով , հաշուատետրի մը մէջ ծանօթութիւններ դրելով եւ այնպիսի կերպարանք մ'առնելով , որպէս թէ այդ փորձէն վերջին ծայր հետաքրքրուէր :

Յետոյ յանկարծ ոտքի ելնելով ,

— Բայց այս մոմերուն ամենքն ալ կը վազեն , կը գոչէ , ամենքն ալ , առանց բացառութեան , գէշ տեսակներ են ասոնք . . . Աւելի լաւ է որ վարժարանս առաջուան պէս կազմով լուսաւորեմ :

Եւ լուրջ դիմօք կը մեկնի , կը հեռանայ , թողլով նպարավաճառն ասչած և անկեղան վիճակի մէջ :

Մ . Թ .

— Երեք բան կայ զորս շատ կանայք պատուհանէն վար կը նետեն , իրենց ժամանակը , դրամը եւ իրենց առողջութիւնը :

— Երբ Արիստօթի կը հարցուի թէ ինչ բան է գեղեցկութիւնը , կոյրերու թողունք այդ հարցումը , կը պատասխանէ :

11) Ե Ե Յ Ք Ս Բ Ի Բ
Վ Ե Ն Ե Տ Կ Ո Յ Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն Ը

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ
Հ Ա Ն Դ Է Ս Գ .
ՏԵՍԻԼ Ա .
ՎԵՆԵՏԻԿ . — Փողոց մը

(Մտնեն Սօլանիօ և Սալարիսօ)

Սօլանիօ . — Ի՞նչ լուր Ռիալթօի վերայ :

Սալարիսօ . — Ա՛հ , ձայն մը կայ միշտ , և առանց սուտ ելնելու թէ Անթօնիօի շատ բեռցած մէկ նաւը նաւարեկութեան հանդիպած է կիրճին մօտ , — Կօտվէնները , նաւուն ընկղմած տեղին անուըդ այդ է կարծեմ , — արկածալից և աղէտաւոր խոր տեղ մը ուր անթիւ մեծ նաւերու կմախքներ թաղուած կան , ինչպէս կ'ըսեն , եթէ կնքամարուհիս պատուաւոր կին մ'է և հաւասարիմ իւր խօսքին :

Սօլան . — Կ'ուզէի որ այս պարագային կնքամարուհիս ամենաստիսօս կինն եղած լինէր կոճապղպղը ծամուներու մէջ , կամ նա հաւտալ կուտայ իւր դրացուհեաց որ իւր երրորդ ամուսնոյն համար կուլայ : Բայց ճիշդ է որ , առանց սահելու երկարաբանութեանց մէջ կամ դեգերելու խօսակցութեան մեծ պողոտայէն դուրս , ազնիւ Անթօնիօն , պատուաւոր Անթօնիօն , — ա՛հ , աւելի պատուարժան մտկելի մը կ'ուզէի գտնել իւր անուան կցելու համար :

Սալար . — Է՛ , վերջը բե՛ր :

Սօլան . — Հէ՛ , ի՞նչ կ'ըսես , վերջը , վերջն այն է որ նա մը կորոյս :

Սալար . — Ա՛հ , կ'ուզէի որ իւր կորուսաներու վերջինն ըլլար այդ :

Սօլան . — Թո՛ղ որ շուտով «ամէն» ըսեմ , կը վտխեմ թէ մի՛ գուցէ աստանն խափանէ ազօթքս , զի ահա հոս կուղայ Հրէի կերպարանքով :

(Մտնէ Եայլօք)

Ի՞նչ լուր Եայլօք , ի՞նչ լուր վաճառականաց մէջ :

Եայլօք . — Դուք գիտէք ամենէն աւելի , ամենէն աւելի աղջկանս փախուստը :

Սալար . — Այդ ճիշդ է , իմ մասիս , կը ճանչէի դերձակն որ նմա թւեր պտորաստեց և որով կարողացաւ նա թախիլ :

Սօլան . — Եւ Եայլօք իւր մասին դիտէր թէ թռչունը թւեր ունէր , և թռչնոց բնութիւնն է թողուլ բոյնը երբ կատարեալ են իրենց թւերն :

Եայլօք . — Նա պիտի դատաւարտուի ազոր համար :

Սալար . — Ճշմարիտ է , եթէ ստատանն նորա դատաւորն ըլլայ :

Շալլօֆ. — Մարմինս և արիւնս այսպէ՛ս ապաստամբի :

Սօլան. — Տէ՛հ, աէ՛հ, զառամեալ դիակ, ի՛նչ, այդ տարիքիդ մէջ կ'ապաստամբի՞ . . . :

Շալլօֆ. — Աղջիկս իմ մարմինն ու արիւնս է կ'ըսեմ :

Սալան. — Աւելի անմահութիւն կայ ընդ մէջ քու և նորա մարմնոյն քան թէ սե կուսարի և փղոսկրի մէջ . աւելի տարբերութիւն կայ ձեր երկուքին արեան քան կարմիր և Ռէնի գիւնիին մէջ : Բայց ըսէ՛ մեզ, իմացա՞ր թէ Անթօնիօ կորուստ մը ունեցեր է ծովու վրայ :

Շալլ. — Ահա՛ ինձ մի ուրիշ բարի գործ : Մնանի մը, շուայլ մը որ քիթը ցոյց կուտայ Ռիալթօի վրայ, մուրացկան մը որ կուգար հրատարակին վրայ փարթամութիւն ծախել . թո՛ղ զգուշանայ մուրհակէն : Զիս վաշխառու կը կոչէր, զգուշանայ թող մուրհակէն . սովոր էր սասակ փոխ առլ՝ քրիստոնէի մը մեծանձնութեամբը : Զգուշանայ թո՛ղ մուրհակէն :

Սալան. — Ա՛հ, ապահով եմ որ եթէ թերանայ իսկ, չի պիտի աւնուս մարմինն, ի՞նչ բանի օգուտ ունի :

Շալլ. — Զկանց կեր տալու : Եթէ բանի մ'ալ չի ծառայէ, վրէժս պիտի յագեցնէ : Նա զիս նախատեց, ինձ արգելք եղաւ կէս միլիոն շահու մը, խընդաց կորուստիս վրայ . ծաղուց վաստակս, ազգս անարգեց, խտուսակեց գործերս, ցրտացուց բարեկամներս, տաքցուց ինձ դէմ թշնամիներս, և ի՞նչ իրաւունք ունէր . Հրեայ մ'եմ : Միթէ Հրեայ մը աչք չունի՞, միթէ Հրեայ մը ձեռք չունի՞, գործարաններ, բարեձեւութիւններ, զբայարանք, սէր, իզ՛ձ : Միթէ սնած չէ՞ նա ալ միեւնոյն կերակրօք, վիրաւորուած միեւնոյն զէնքերով, ենթակայ նոյն ախտից, բժշկուած միեւնոյն միջոցներով, տաքցած և մտած միեւնոյն ամառով և ձմեռով քրիստոնէի մը նման : Եթէ զմեզ խայթէք, շարի՛ւնիր . եթէ խաղտեցնէք, չե՞նք խնդար, եթէ թունաւորէք ըզմեզ, չե՞նք մեռնիր . եթէ զմեզ նախատէք, չպիտի լուծենք մեր վրէժն : Եթէ ամէն բանի մէջ կը նմանինք ձեզ, ասոր մէջ եւս պէտք ենք նմանիլ : Եթէ Հրեայ մը անարգէ քրիստոնեայ մէկը, ո՞րք պիտի ըլլայ իւր խոնարհութիւնը . վրէժ : Եթէ քրիստոնեայ մը նախատէ Հրեայն, ո՞րք պիտի ըլլայ Հրէին համբերութիւնն, եթէ ուզէ հետեւիլ քրիստոնէին օրինակին . վրէժ : Վատթարութիւնը զոր կ'ուսուցանէք ինձ, պիտի գործադրեմ, և այս շատ գէշ պիտի ըլլայ եթէ ձեր սովորեցածին հետեւիմ :

(Մտնէ սպասաւոր մը)

Սպասաւորն . — Պարոնայք, տէրս

Անթօնիօ իւր տունն է և կ'ուզէ ձեր երկուքին հետ խօսիլ :

Սալան. — Ամէն կողմ փնտոտեցինք զինք :

Սօլան. — Ահա՛ այդ ցեղէն հատ մ'ալ կուգայ, ալ չգտնուիր երրորդ մը նոյն տեսակէն, եթէ երբէք սատանան ինք Հրեայ չըլլայ : (Կ'ելնեն Սօլանիօ, Սալանրինօ և Սպասաւորն) :

(Մտնէ Թիւպալ)

Շալլօֆ. — Ի՞նչ լուր, Թիւպալ, ի՞նչ լուր ձէնովայէն : Գտա՞ր աղջիկս :

Թիւպալ. — Ուր որ իւր վրայ կը խօսէին, այդ ամէն կողմերը թախտեցայ, բայց զինք չկրցայ գտնել :

Շալլօֆ. — Ա՛հ, վայ, վայ, վայ, վայ, աղամանդ մը կորուստ, ինձ երկու հազար տուքաթ արծած էր ի Յրանքֆորթ : Նզովք ի՛լած չէր ցարդ մեր ազգին գլուխը, չէի զգացած այդպիսի բան մը մինչև օրս : Երկու հազար տուքաթ աղոր մէջ, և ուրիշ թանկագին, թանկագին գոհարներ : Կ'ուզէի սոքիս տակը մեռած տեսնել աղջիկս և գոհարեղէնները ականջներէն կախուած . ոտքիս տակ թաղուած ըլլար և տուքաթներն իւր դագաղին մէջ : Անոնցմէ լուր չի կայ, վայ, այսպէ՛ս . և չեմ գիտեր որչափ էլ ծախսուած է՝ զանոնք փնտրուելու համար . վա՛խ, կորուստ կորստի վրայ : Գողը փախաւ այնչափով, այնչափ ալ գողը գտնելու համար . և ոչ գոհացում, ոչ վրէժլուծում, և չարաբախտութիւն մը իմ ու սիրուս միայն և ոչ ուրիշին, ոչ այլ հաւաչանք բաց ի իմ շնչէս միայն, ոչ ուրիշ արատաւք իմ թափածներէն դուրս :

Թիւպալ. — Այո՛, ուրիշ մարդիկ ալ իրենց դժբաղդութիւնն ունին . Անթօնիօ, ի ձէնովա լրածիս համեմատ . . . :

Շալլօֆ. — Ի՞նչ, ի՞նչ, ի՞նչ, դժբաղդութիւն մը, դժբաղդութիւն մը :

Թիւպալ. — Իւր մէկ նաւը նաւաբեկեր է Տրիպոլէն դարձին :

Շալլօֆ. — Ծնորհակալ եմ Աստուած, շնորհակալ եմ Աստուած : Ծի՛շէ է, ճի՛շդ է :

Թիւպալ. — Խօսեցայ նաւատեսաց ումանց հետ որք ազատեր էին վտանգէն :

Շալլօֆ. — Ծնորհակալ եմ քեզ, բարի Թիւպալ . լաւ լուրեր, լաւ լուրեր, հա՛, հա՛, ո՞ւր, ձէնովա :

Թիւպալ. — Աղջիկդ ծախսեր է, լրսածիս համեմատ, ութսուն տուքաթ մէկ գիշերուան մէջ :

Շալլօֆ. — Դաշոյն մը կը խօթես սըրփիս մէջ, ալ ոսկի չպիտի տեսնեմ, 80 տուքաթ մէկ անգամէն, ութսուն տուքաթ :

Թիւպալ. — Հետս կային վեներտիկ եկող մի քանի պարտապահանջներն Ան-

թօնիօի, որոնք կ'երդնուին թէ նա սընանկ պիտի խնայ :

Շալլօֆ. — Աղոր շատ ուրախ եմ, պիտի քաշել տամ իրեն, պիտի խոջոտագեմ զինք . աղոր շատ ուրախ եմ :

Թիւպալ. — Այդ պարտապահանջներէ մին մատանի մ'ինձ ցոյց տուաւ որ աղջկանդմէ առած էր ի փոխարէն կապիկի մը :

Շալլօֆ. — Անիծեալ ըլլայ . զիս կը խոջոտագես, Թիւպալ . այդ իմ ատուկատախաղս էր, աղայ հասակիս մէջ իրայէն առած եմ զայն . կապիկներով լեցուն անապատի մը հետ չէի փոխեր :

Թիւպալ. — Բայց Անթօնիօն արդարեւ կործանեցաւ :

Շալլօֆ. — Այո՛, այդ իրաւ է, շատ ճշմարիտ է այդ : Գնա՛, Թիւպալ, ինձ քաղաքապահ զինուոր մը վարձէ, տասն և հինգ օր առաջուց վարձէ, եթէ թերանայ սրտեալ օրին, Անթօնիօի սիրտը պիտի աւնում . զի նա եթէ վեներտիկ չըլլար, ուզած վաճառականութիւնս կ'ընէի : Գնա՛, գնա՛, Թիւպալ, և զիս մեր սինակոկը գտիր, գնա՛, բարի Թիւպալս, մեր սինակոկը, Թիւպալ : (Կ'ելնեն) :

Թարգմ. Ա. ՀԱՄԲԱՐԿԱՔԹԱՆ (Շարունակելի)

ԶՈՒՅՐԻՆԵՐ

— 0 —

— Որչա՞փ կ'ուզես զիս պտտցնելու համար քաղաքին և Բուսթեռի մէջ տեղը :

— Առաջին ժամուան համար մէկ ու կէս ֆլօրին, երկրորդ և մնացած ժամերու համար մէկ ֆլօրին, ազնուական տէր :

— Շատ լաւ, բարեկամ, ուրեմն ես սա ճաշարանը կը մանեմ՝ պատառ մը բան ուտելու մինչեւ առաջին ժամը լինիս, և երկրորդ ժամին կ'սկսինք մեր պտտյալը ձեր կաւքով :

Ամուսինը . — Ծո՛ւտ, շո՛ւտ, դուրս ել սենեկէն :

Կինը . — Ի՞նչ կայ, ի՞նչ կայ :

Ամուսինը . — Տու՛նը կ'այրի, վայրկեան մը ուշանաս, մենք ալ կ'այրինք, շուտ վազէ, փրկենք կեանքերնս :

Կինը . — Հիմայ կուգամ, սենեակը մի քիչ կարդաղբեմ, ջրհանկիրները անկարդ վիճակի մէջ չտեսնեն սենեակինս :

Մեծ հայրը . — Է՛հ, Պօղոս, ի՞նչ կ'ուզես որ քեզ ընծայ ընեմ ծննդեանդ օրուան համար :

Պօղոս . — Ա՛հ, մեծ հայր, ինձ հեռաձայն (թէլեֆօն) մը գնէ, որպէս զի կարենամ դասերս ըսել աղով՝ առանց դպրոց երթալու :

Ամուսինը . — Միրելի Մեղանիաս , այս բուռնիկան համով չէ բնաւ :

Կինը . — Ի՞նչ կ'ըսես , բաց կերակրի գիրքը , ամենահամեղ է կ'ըսէ :

Աղքատ մը ազնուականի մը կը մօտենայ ցոյց տալով ձեռքի թուղթն ուր իւր խուլ և համր ըլլալը նշանակուած է :

Լաւ ուրեմն , առ քեզ 5 սանթիմոց մը , ըսելով Քրոնք մը կուտայ աղքատին : Աղքատը գայն շուտով գրտանը կը դնէ : Ո՛չ , կարծեմ սխալեցայ կը յարէ ազնուականը , մէկ Քրոնքնոց չէ՞ր տըւածս :

Աղքատը . — Ոչ , տէր , 5 սանթիմոց էր , կը պատասխանէ , մոռնալով համր և խուլ ըլլալը :



ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պատուանճանք . — Ա . կարգի Օսմանիյէ պատուանճան տրուեցաւ Միամի թագաւորին եղբայր Տամրոնի իշխանին , Բ . կարգի Օսմանիյէ՝ Միամի թագաւորին որդի Ջիւա իշխանին , և այլ և այլ կարգի պատուանճաններ՝ հետեւորդաց : — Գ . կարգի Մէճիտիյէ՝ Ադրիանուս սրտոյ նահանգին Տէֆթէրտար Բէֆիգ պէյի , և Միլլի Աշիրէթի պետ Թէմսփիլատէ Իպրահիմ փաշայի :

— Օղայիկ կազով Ղալաթիան , Բերան և Վոսիսորի եւրոպական եղերքները ըյս և Չերմութիւն տալու մենաչնորհ խնդրած են Գերմանացի մը և Պեճիացի մը , որք կ'առաջարկեն ձըրիարար կազ տալ մի քանի պետական շէնքերու , մզկիթներու ու զօրանոցներու , նորոգել քաղաքին մէջ արդէն գտնուած լապտերները , 50 000 ոսկի վըճարել Տոլմա Պահէչի կազարանին մեքենայից և այլոց համար , նորոգել ու ընդարձակել սոյն կազարանը , որոշեալ գինէն 30 000 զեղչել և դրամը ամիսէ մ'առնուլ՝ կառավարական շէնքերու , մզկիթներու , զօրանոցներու , հիւանդանոցաց , եկեղեցեաց և Պատրիարքարանաց տրուելիք կազին համար , և վերայիշեալ յանձնառութեանց գործադրութեան համար կանխաւ 1000 ոսկի յանձնել Օսմ . կայս . Պանքային իրրեւ երաշխաւորութիւն :

— Երդուրնցեւ են , հանգիսաւոր կերպիւ , նուիրական գրքին վրայ՝ Համիտիյէ հեծեղազուհերը կազմող Աշիրէթներէն Շազըր Աշիրէթին պետերն ու անհատները , բնաւ չչեղելու Աստուծոյ հրամանէն ու Վեհ . Սուլթանին Իրատէներէն և լիովին ի գործ դնելու զինուորական նուիրական պարտաւորութիւնները :

— Սերասիա ժամաներ է սոյն զինուորական քննիչ յանձնախումբն որ պաշտօն ունէր այցելել մէկ քանի գաւառներ :

— Ձերբակալուեւ են Բիշիքեանը Աշիրէթին պատկանող Քիւրտ Հոչան , Սաթօ , Մէհմէտ և Ալի անուն աւագակներն , որք մարդասպանութիւններ ու աւարառութիւններ ընելով փախըստական կը թափառէին և վերջերս Սերասիոյ Չէնկէլ Պօղազը ըսուած տեղն ևս յարձակումներ ըրած էին :

— Եկմէնէն կը պաշտօնագրեն թէ , Ապ և Բիրիմ գաւառակաց մէջ անդորրութիւնը վերահաստատուեւ է և Մէշըրքի յերուզակները փախեր են : Միրլիփա Ալի փաշա իւր զօրքերով յարձակեր է Հոտէյտաի Խաֆշ ու Թոյլէ գաւառակաց շրջակայքը խուսով մեծ մասամբ Հաշիտցի ու Պէհիլցի 5—600 է բաղկացեալ յերուզակներու վրայ , զորս Հաշիտցի Իպիհիս հաւաքած էր դժժուարամտաչելի լերանց վրայ գտնուած բերդանման աշտարակաց մէջ : Այս յերուզակներ նուաճուեւ և այդ աշտարակներ թնդանօթի հարուածներով քանդուեւ են : Տեղւոյն ժողովուրդը խուսի խուսի Ալի փաշայի դիմելով հընաղանդութիւն յայտներ ու բարեմաղթութիւններ ըրեր է վասն կենաց Վեհ . Սուլթանին :

— Էսիրեւի նահանգին ներկայ տարւոյ հասութից յուելեալ մասէն 20.000 ոսկի պիտի յատկանայ , տեղւոյն գորաբանակին ինչ ինչ պիտոյից և զինուորականաց որքերուն ու այրիներուն տրուելու համար :

— Վեց փոք եղբնաւեւ ի Լոնտոն յանձնարարել հրամայած է կայս . Իրատէ մը , իբրեւ պահակ գործածուելու համար կարմիր ծովու , Միջերկրականի մէջ և այլ հարկ եղած տեղեր : Այս զգեհաւք պիտի զինուին նորահնար թընդանօթներով , Թօրիփիսօ արձակելու համար գործիներ պիտի ունենան և ի հարկին առագաստ ևս պիտի կրնան գործածել : Սոյն վեց շրգեհաւք պիտի արժեն 90.000 ոսկի և շինուելով պիտի յանձնուին մէկ տարիէն :

— Սիւսի քաղաւորին եղբայրն , որդին և սոցա հետեւորդք շարթուս մայրաքաղաքիս նշանաւոր շէնքերն և արքունի հաստատութիւններն այցելելէ յետոյ , հինգ շարթի օր մեկնեցան ի Պիրէոն , իրենց հետ տանելով լուսանկարներն զորս Ապուսլահ եղբայր շինել տուած են՝ գլուխները Ֆէս դրած :

— Սնանկ հոչակուեցաւ կաշիի վաճառական Բարսեղ Տէմիրճեան , հաստատեալ ի Պոլիս , Աթ Փազար :

— Յուցահանդէս մը կազմակերպուած է Գեղարուեստից վարժարանին

մէջ՝ աշակերտաց կողմէ պատրաստուած նկարներով : Այսօր տեղի պիտի ունենան աշակերտաց քննութիւնք և ցուցահանդէսը պիտի վերնայ :

— ՅԱրաքիլի հրդեհ ծագելով անցեալ շաբթու մէջ , այրեր են երեք խանութներ , կառավարական դատարանն ու իւր շրջանակին վերաբերեալ սենեակներն :

— Խարբեղէն մայրաքաղաքս գալու համար ամսոյս 7ին մեկներ է նախորդ կուսակալ Նուսուհի պէյ :

— Բաղէթի Տէֆթէրը Խազանիի պաշտօնեայ կարգուած է Ահմէտ Բէմզիէֆէնի , Թաբուի նախկին քարտուղար Նիկովիդիոյ :

— Վիրաբուժական կարևոր գործողութիւն մը կատարեր է Տոքթօր Սարէլ 15 տարուան բանտարկութեան դատապարտուած Գասրմ անուն մարդու մը վրայ , որ իւր պատիժն աւարտելու մօտ երեսին վրայ քաղցկեղ ունեցած էր : Գասրմի երեսին այլ և այլ մասերն , երկու շրթուներն և քթին մեծ մասը փած էին : Տոքթօր Սարէլ հանելով փած մասերն ու քիմքը , մարմնոյն ուրիշ մասերէն մսեր կտրեր և անոնցմով արուեստական քիմք մը դրած է բերնին մէջ : Գասրմ բժշկական ժողովոյն ներկայացուելով , ժողովականք շնորհաւորեր են զՏոքթօր Սարէլ :

— Լիվախի երթալու համար Վեհ . Սուլթանին հրամանաւ շաբաթ օր մայրաքաղաքէս մեկնող Օսմ . պատուիրակութիւնը երկուշաբթի օր ներկայացեր է Ռուսիոյ կայսեր ու կայսրուհւոյն , Վեհ . Սուլթանին նուէրները մատուցեր և նոյն երեկոյն ներկայ գտնուելով սրալտան մէջ գտնուած պաշտօնական հացկերութին , արժանացեր է Չարին մասնաւոր մեծարանաց : Պատուիրակութիւնը երէկ մայրաքաղաքս ժամանեց և ուղղակի կայս . պալատ երթալով , Վեհ . Սուլթանին մատոյց Չարին շնորհակալեաց մէկ ինքնագիր նամակն :

— Հոբանի ու Պէրուքի մէջ շինուելիք թրամուէյի գծերու ընկերութիւնք միացած են 99 տարուան մենաշնորհով : Արտօնատէրն է Եուսուֆ Մուլթանիէֆ :

— Դամասկոս զրկուած են զինուորական 6 բժիշկներ և 132 անտուկ դեղ :

— Ի Տիգրանակեթս մի քանի օր անձրեւ գալով , Տիգրիս գետը յորդեր ու եզերքը գտնուած պարտէզներն աւերեր է : Տուն մ'ևս վիւելով , այր ու կին ևս երկու տղայք իլատակաց ներքեւ մնացեր են :

— Հացագործներու հացը 50 , սիլիսեիներունը՝ 40 փարսոյի պիտի ծախուին խանութի մէջ . շրջուն հացավաճառք պիտի ծախեն առաջին տեսակը 55 փարսոյի , երկրորդը՝ 45 փարսոյի :

42)


Մ Ե Ռ Ե Ա Լ Կ Ի Ն Ը

— Դո՛ւ՛ք, գոչեց, աչօքն անյաղարար հարցախորձելով զնա: Ո՛հ, ինչպէս պիտի կարենամ ձեզմէ այդպիսի զոհողութիւն պահանջել:

— Պատրաստ եմ: Այդ զոհողութիւնը պարտաւոր եմ ընել ձեզ: Այս գիշեր ձեր ներկայութեան այնպիսի բաներ տեղի ունեցան որք արդարեւ վերաւորեցին զձեզ, այնպիսի բաներ որոց պէտք չէր որ ենթարկէի զձեզ...: Այս աստիճան յիմարութիւններ չէի կարող գուշակել...: Ներողութիւն կը խնդրեմ... պէտք էր այս տեղէն հեռացնէի զձեզ, բայց այլոց դաս մը տալ պիտի լինէր այս, և այդ ալ շատ փափուկ գործ մ էր...: Վերջապէս անիրաւ գտնուեցայ և հատուցում մը պարտիմ ձեզ. բաց աստի, երբ ամուսնացայ ձեզ հետ, խոստացայ անձիս, խոստացայ ձեր ծնողաց և նոյն իսկ ձեզ, ընել ամէն ինչ, ի բաց առեալ անկարելին, որպէս զի երջանիկ լինիք. խոստումս պիտի կատարեմ: Թերեւս Բարիզ առաւել բնակելի վայր մը պիտի լինէր ձեզ համար, եթէ լուսադոյն ընտրութիւն մը ըրած լինէի ձեր յարաբերութեանց մէջ: Ինչ որ ալ լինի, շատ ուշ է. յիրաւի կամ յանիրաւի, Բարիզ ատելի եղած է ձեզ, ուրեմն պիտի թողումք զայն: Երկայն խորհեցայ այս կէտին վրայ, այս տըխուր օրուան մէջ. որոշումս տուած եմ արդ...: Ծատ կը վախնամ, սիրելի Ալիէթս, թէ այն դժուարութիւնները զորս կը յարուցանէ դաւանութեանց տարբերութիւնը, չհետեւին մեզ ամենուրեք, բայց կը խոստովանիմ թէ Բարիզու մասնաւոր միջավայրը կրնար անոր նպաստել...: Ձեզմէ պիտի խնդրէի միայն որ մեր բնակարանն ի վառավիլ չհաստատեմք: Ի բաց առեալ ուրիշ ամէն անպատեհութիւն, իրօք շատ հեռու պիտի լինէր այդ վայրն, նոյն իսկ ձեզ համար, որ պիտի ուզէք թերեւս մերթ ընդ մերթ այդ թշուառ Բարիզու օդը շնչել, երբ ա՛լ եւս դատապարտեալ մը չպիտի լինիք անդ...: Վաղը ժամանակ կ'ունենամք այս մասին խօսելու. այժմ հանդարտեցէք, խօսք տուի. ննջեցէք խաղաղ: Ալիէթ նորա աչացը մէջ կը նայէր պիշ պիշ, զարմացման և յափշտակութեան մի արտայայտութեամբ. յետոյ բռնեց նորա ձեռներէն մին զոր շրթանքը մօտեցնելով, կը սիրեմ զձեզ, ըսաւ:

— Քնացէ՛ք, պատասխանեց Պեռնաու մեղմիւ, գրկելով զԱլիէթ:

Եւ քնացաւ նա մանկական քունով մը:



Դ.

Այդ յանչափս դժուարին և յայնչափս արժանաւոր զոհողութիւնը զոր Պ. տը Վօտուիզուու մտադրած էր յանկարծ, խոստանալով փոխադրել իւր բնակարանը Բարիզէն հեռի, հազիւ արդիւնքն եղած էր իւր խորհող կամեցողութեան: Այդ որոշումը կարծես իւր սրտէն բղրած էր ոչ միայն իւր կնոջ տառապանացն ի տես, այլ նորա նկատմամբ ցայն վայր իւր ըրած անիրաւութեանց կսկծեցողցիչ ազդեցութեան ներքեւ: Այս անիրաւութիւնք յանկարծ իւր աչացն առջեւ առած էին գրեթէ ամօթալից բնութիւն մը, որ սաստկապէս զրգուած էր իւր գիւրազգացութեան և վեհանձնութեան բոլոր զգացումները: Երբ Ալիէթ, իւր մասնակի զառանցութեան մէջ արտասանած էր յանկարծ սա յուսահատական բառերը. — «Ձձեզ չկարենալ փրկելէ զատ, ես ինքս ալ կը կորսուիմ», — նա ըմբռնած էր թէ Ալիէթ

մեծաւ զգուշութեամբ վարուած էր իրեն հետ և թէ աւելի ճշդիւ պարտ էր ըսել. «Ձիս ալ կը կորսնցնէք.»

Ընդ աղօտ կը յիշէր Հանրի Դ.ի դիմակին պարահանդէսն ու հացկերոյթը, ճշմարիտ զեղիս կերուխումի այն տեսարաններն որք պարագայից բերմամբ տեղի ունեցած են և որոց կերպով մը ստիպած էր իւր կինը ներկայ գտնուիլ: Պեռնաու տը Վօտուիզուուի նման անձի մը համար, յոյժ ներող բարոյագէտ, այլ ծայրայեղ խոտապահանջ ի մասին պատուոյ վերաբերեալ մի քանի սկզբանց, եթէ աշխարհի վրայ կար բան մը բացարձակապէս ամօթալից, այն ալ ապականելու մոլորեցնելն էր իւր ամուսինը. և իւր վեհանձնութիւնը զայրացնող բանն էր այն մտածումը թէ մի գուցէ Ալիէթի նման ազնիւ արարած մը կասկածէր սոյնպիսի խայտառակութենէ մը: Այսպէս ուրեմն գուրն ու վեհանձնութիւնը, միանգամայն վերաւորեալ պատուասիրութիւնը որոշել տուին իրեն՝ գրեթէ առանց մտածելու՝ վերջ տալ արտասուաց և վերստին արժանանալ դեռատի կնոջ համարման, զոհելով նմա բոլոր իւր անձնական ճաշակներն և իւր մասնաւոր սովորութիւնները:

Թէ այդքան կարեւոր և այդքան հապճեպով տրուած որոշում մը կրնայ աւելի կամ նուազ զղջում յառաջ բերել, աղիկից հաւանական բան չկայ: Այսու հանդերձ այդ որոշումը մեծ պատիւ կը բերէր անոր որ այնքան վսեմ զգացմանց ներշնչմանց ներքեւ կրնար այդպիսի որոշում մը տալ և գործադրել, որոշում որ անգամ մ'եւս կ'ապացուցանէր թէ քանի՛օն Ալիէթ և իւր ամուսինը շատ մը նկատումներով արժանի էին միմեանց, թէև իրարմով դժբաղդ: Այս առթիւ դիտել կուտանք մեր ընթերցողաց թէ եթէ տէր և տիկին տը Վօտուիզուուի պատմութիւնը՝ խեղացի և բարեպաշտ կնոջ մը ու անպարկեշտ գուեհիկ անձի մը մէջ տեղի ունեցած բոլորովին անյարմար ամուսնութեան մը հասարակ պատմութիւնը լինէր, անշուշտ չպիտի գրաւէր մեր ուշադրութիւնը և ոչ ալ պիտի ներկայացնէինք զայն հասարակութեան՝ նովաւ շահագրգռուելու համար...: Բայց թըւեցաւ մեզ թէ եթէ ո՛չ օգտաւէտ, գէթ բաւական յանկուցիչ ուսումնասիրութիւն մը պիտի ընծայէ մեզ՝ երկու ընտրելագոյն ազնուատուհմ անձանց միութիւնը, իւրեանց բոլոր յատկութիւններով արդէն կատարելապէս միմեանց յարմար, ի բաց առեալ կրօնական տեսակէտը:

Պեռնաու՝ ամուսնութենէն շուրջ երկու տարի վերջ իւր հօրեղբոր մահուամբ, կոմս տը Վօտուիզուուի տիտղոսն առած, որով մեծ ժառանգութեան մ'ալ տիրացած էր, ճիշդ այն ատեն երբ տեղի կ'ունենային սոյն դէպքեր, պարագայ մ'որ թոյլ կուտար իրեն իւր բնակութիւնը Բարիզէն դուրս հաստատելով հանդերձ պահել նաև Մօնսօ դարաստանի ապարանքն: Բայց այս մասնակի միջոցը ապագային համար նախազգուշութիւն մը լինելով հանդերձ, կրնար անհանգըստութիւն պատճառել իւր կնոջ և միանգամայն գործնականի մասին ունենալ ոչ նուազ անյարմարութիւններ: Պեռնաու ուզեց ուրեմն զոհողութիւնը կատարեալ ընել և խընդիրն հիմնովին լուծել: Ապարանքն ի վաճառ հանուեցաւ և բնական էր որ շուտով գնող մը պիտի գտնուէր այս համբաւուաւոր թաղին մէջ: Արդէն Պեռնաու կատարելապէս համակարծիք էր Ալիէթի հետ, փոխանակ գաւառական քաղաքի մը՝ զիւղի մը մէջ հաստատել բնակութիւնը: Նոյն կատարեալ համաձայնութեամբ (աւելորդ է ըսել թէ Ալիէթ սակարկութիւն չէր ըներ պայմանաց մասին) որոշուեցաւ թէ Պեռնաու, երբ մէկ կամ երկու օր առանձին Բարիզ գար մնալու, իւր ակումբը պիտի իջնէր, իսկ երբ կնոջն հետ գար, օթեանը պիտի իջնէին, որպէս զի կարենային վայելել Բարիզի հաճոյքներն առանց իրենք զիրենք ձգելու հոսանքին մէջ:

Ի Սափինիէն հաստատուելու խնդիր իսկ չէր կարող ծագիլ. Պեռնառ՝ իւր հօրեղբոր մահէն վերջ՝ օտարականներու վարձու տուած էր այդ դղեակը, որ ճիշդ Վառավիլի նման, անյարմար էր արդէն հեռաւորութեան պատճառաւ: Պ. տը Վօտուիգուռի նօտարը, Բարիզու շրջակայից մէջ, կեդրոնէն քսան երեսուն մըրնի չափ հեռի, հետազօտութիւններ կատարելէ վերջ, Փօնթէնպօլէն անդին, Նըմուռի և Ժիլնի դաւառին մէջ, դտաւ գեղեցկատեսիլ ստացուածք մը որ Վարմութիէ կը կոչուէր մօտակայ աւանի մը անուամբն: Պեռնառ և Ալիէթ որոշեցին հաստատուիլ այս կալուածքին մէջ՝ սորա շատ մ'առաւելութեանցն համար: Սոյն բնակութեան Բարիզէն ունեցած հեռաւորութիւնը բաւական էր չգրաւուելու համար այդ քաղքի հրատարակներէն, և բոլորովին անձանօթ չլինելու համար աշխարհային կենցաղոյն: Գեղեցիկ որսատեղիներ կը գտնուէին Վարմութիէի շրջակայներն և դղեկն իւր յարակից մասերուն մէջ կը պարունակէր ընդարձակ անտառներ: Սոյն դղեակն ինքնին բաւական հոյակապ բնակութիւն մ'էր Ժ. Լուգովիկոսի ոճով, մեծատեսիլ նախագաւթով մը և փառաւոր խոհակերտներով, ախտաներով և կառատուններով: Վերջին տէրը Պ. տը Վօտուիգուռի նման յետին ծայր ձիւ սիրահար, ախտաներու մէջ հանգստութեան և մինչեւ իսկ շքեղութեան մասին ոչինչ խնայած էր: Միանգամայն շրջակայ վայրերը յարգարած էր պաճարարուծութեան յատուկ մի քանի մարգագետիններ: Պեռնառ զգածուեցաւ այս մանրամասնութիւններէն որք այս կերպ մը աքսորատեղոյն մէջ ըստ հաճոյս ըզբօսանքներ կը խոստանային իրեն:

Մինչդեռ ի Վարմութիէ հարկ եղած նորոգութիւններն ու կարգադրութիւնները կ'ընէին, տիկին տը Վօտուիգուռի Վառավիլ գացած էր մի քանի շաբաթ իւր ծնողաց մօտ մնալու, ինչպէս սովոր էր ընել ամէն ամառ, և ինչպէս ամուսինն եւս սովոր էր երթալ մի քանի օր հոն անցնել: Պեռնառ տը Վօտուիգուռ միշտ մեծ պատուով կ'ընդունուէր անդ: Ի վաղուց հետէ իւր չքնաղ ձիրքերը, հակառակ կըրօնի մասին կարծեաց տարբերութեան, բոլոր նախապաշարուներուն յաղթած և բոլոր սրտերուն տիրացած էին — մինչեւ իսկ օրիորդ տը Վառավիլին, Ալիէթի այս պառաւ հօրաքրոջ որոյ մասին Պեռնառ երբեմն այնքան անդու թօրէն խօսած էր իւր օրագրին մէջ: Մեր ընթերցողք քաջ կը ճանչեն այժմ Ալիէթի բնաւորութիւնը և անշուշտ շէն զարմանար թէ այսքան վսեմ զգացմանց տէր կին մը իրեն համար պահած և զգուշութեամբ ծածկած լինի իւր ծնողքէն՝ գաղտնիքն այն տառապալից փորձութեանց զորս անցուցեր էր ամուսնութենէն ի վեր: Արդէն Ալիէթ լոկ ճշմարտութիւնն էր յայտնած, կրկնելով թէ իւր ամուսինն իրեն համար կատարելագոյն բարի, հոգատար, յարգալից և ազատամիտ անձ մ'էր, գուցէ կատարելագոյն հաւատարիմ չլինէր, բայց ինքը կ'անգիտանար զայս: Գալով կրօնական դաւանութեանց տարբերութեան որ էր բուն պատճառը իւրեանց բոլոր ներքին վշտից, Ալիէթ չափազանց ողջամիտ էր և չափազանց անձնատէր գանդատելու համար այդ մասին, դրեթէ հակառակ իւր ծնողաց հաւանութեան՝ զնա իրեն ամուսին ընտրելէ յետոյ: Գուռթիզօլ երէցը միայն տեղեկացած էր այս մասին Ալիէթի մի քանի գաղտնեաց. նա չէր քօղարկած իւր հօրեղբոր այն խորին վիշտը զոր կ'զգար ի Բարիզ բարոյական միջավայրի մը մէջ որ այնքան պզտոր էր և այնքան ստորին այն միջավայրէն ուր ինքը կրթուած էր: Իսկ ինչ որ կը վերաբերէր իւր ամուսնոյն ի հաւատ դարձի խնդրոյն, նա ապատօրէն զգացուցած էր թէ իւր յոյսերն ի դերեւ ելեր էին և թէ կ'սկսէր ա'լ եւս վճատիլ: Բայց այն ազնիւ եկեղեցականը որ ամէն տարի կը հանդի-

պէր Պեռնառի ի Վառավիլ, ոչ նուազ ջերմ սիրոյ զգացում մը կը տածէր այն անառակ որդւոյն վրայ և կը բաւականանար թերահաւատ գոչելով զնա: Նա չէր յուսահատեր ապագայէն և առաւել իրաւունք ունեցաւ չյուսահատելու, երբ իմացաւ այն զոհողութիւնը զոր Պ. տը Վօտուիգուռ կ'ընէր իւր կնոջ, հեռանալով Բարիզէն. նա տեսաւ, ինչպէս նաեւ համայն ընտանիքն Ալիէթի, յանձին Պ. տը Վօտուիգուռի ոչ միայն ամուսնական անձնութեան ապացոյց մը, այլ միանգամայն՝ գաղափարաց բարձր շարքի մը մէջ՝ թանկագին նշոյլ մը և յառաջընթաց նշան մը: Ի՛նչ արդիւնք կարելի չէր սպասել այսուհետեւ Ալիէթի ազդեցութենէն, որ թուի թէ սկսած էր առաւելագոյն կերպիւ տիրապետել իւր ամուսնոյն մտաց վրայ:

Նոյն տարւոյ սեպտեմբեր ամսոյ վերջերն էր որ տէր և տիկին տը Վօտուիգուռ վերջնականապէս հաստատուեցան իրենց Վարմութիէի դղեկին մէջ: Որսորդութեան եղանակն էր, և բարեբաստիկ առիթ մ'էր այս, այնու զի սա պիտի մեղմացնէր Պ. տը Վօտուիգուռի իւր նախկին կեանքէն դէպ ի իւր նոր կենաց անցքին առաջին օրերը: Գալով Ալիէթի, սոյն առաջին օրերը բնականաբար իրեն համար կատարեալ երանութեան օրեր եղան. շունչ առնուլ սկսած էր: Կը թուէր իրեն թէ նաւահանգիստ մտած էր՝ վտանգալից, տաղտկալից և վճատեցուցիչ երկար ճամբորդութենէ մը յետոյ: շեշտ մխիթարութեամբ կ'զգար թէ վերստին տիրացած էր իւր անձին, ինչպէս իւր աղջկան ու միանգամայն ամուսնոյն: Երբէք զՊեռնառ այնքան սիրած չէր, և առաւել քան երբէք փոյթ ունեցաւ հաճելի լինելու նա: Գրեթէ ամէն օր ձի կը հեծնէր նորա հետ եւ զուարթօրէն ի միասին կը կատարէին նորանոր արշաւանքներ այս անձանօթ երկրին մէջ: Ալիէթ ուսաւ հրացան դորձածել՝ կարենալ ամուսնոյն հետ որսի երթալու համար: Եւ սակայն որսորդութեան մէջ միշտ անյաջող եղաւ, չափազանց ջրօտ եւ երէին ասջ և չափազանց դիւրագոյն լինելով: Նա իւր ամուսնոյն համար կարգաւ հրաւիրեց իրենց Բարիզու բարեկամաց եւ շրջակայ ծանօթից մէջէն ընտրեալ որսի մի քանի ընկերներ: Այս կերպով ջանաց տակաւ ընտանեցնել զՊեռնառ զիւղին կլիմային եւ ի սկզբան զգացնել չտալ նմա առանձնութեան տաղտուկը, վերապահելով հաճոյից թագուն տրոփումներով՝ ձմեռնային երկար գիշերներու առանձնակի խօսակցութիւնը, երբ ձիւնը ծածկած պիտի լինէր անտառները:

Պ. տը Վօտուիգուռ, որուն համար ձմեռուան երկար գիշերներն թերեւս նուազ քաղցրաթափուտ հեռանկար մը կ'ընծայէին, կը հրճուէր առ ժամս իւր ներկայ կեանքով, որ իրօք գրեթէ բնաւ չէր տարբերեր այն կենցաղէն զոր ցարդ վարած էր տարւոյն սոյն եղանակին մէջ: Միտոյն, մինչեւ այն ատեն այլոց ստացուածոց մէջ որսացած էր. այս առաջին անգամն էր որ իւր ստացուածոց մէջ կ'որսար և առաջին անգամն էր նաեւ որ որսորդի մը հաճոյքներն վայելելով հանդերձ, կ'զգար կալուածատիրոջ մը նեղութիւնները: Կը վախնար և կը ստահար այն գաղտնի որսացողներէն որք կը շրջապատէին իւր անտառները: Առաւօտ և երեկոյ կը գլորգլորէր իւր երկու պահնորդներու ետանդը և այդ ամպարիշտ որսորդաց դէմ այնպիսի նախանձախնդրութիւն և զայրոյթ ցոյց կուտար, բոլորովին հակառակ իրեն սովորական եղած ծաղրելի անխիթութեան, որք հաճոյք կը պատճառէին Ալիէթի:

(Շարունակելի)



Նոր Դասագրքեր

ՊԱՏՄԱՍՏՆԱԼ Ի Յ. Գ. ՓԱԼԱԳԱՇԵԱՆԷ

ՏԵՂԱԳՐՈՒԹՅԱՆ Կ. ՊՈԼՍՈՑ եւ շրջակայից, յատակագրի փոփոխութիւններով Վոսփարի. Յաւելուած՝ 4. Պոլսոյ խանութրուն ընդհանուր ցուցակը. Վարժարանաց եւ ժողովրդեան համար..... 100 Փարս.

ԱՇԽԱՏԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ Նախապատրաստական դասագիրք. Բնական, Ուսումնական եւ Քաղաքական. Բ. տպագրութիւնն հիմնովին բարեփոխեալ եւ նոսրացեալ՝ մանկավարժութեան նորոգոյն պահանջմանց համաձայն 3 Արշ.

ՊԱՏՄԱՍՏՆԱԼ ԱՇԽԱՏԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ Հանդերձ Աշխարհացոյց տախտակօք. Բնական, Քաղաքական եւ Տնտեսական..... Արշ.

ԹՈՒՍԱԳՐՈՒԹՅԱՆ Նախապատրաստական Դասագիրք. Մտաւոր եւ Գրաւոր. Գ. տպագրութիւն. — Մանկավարժական նոր եւ դիւրուսոյց եղանակաւ պատրաստուած եւ մանկական բազմաթիւ պարզ եւ ընտանի խնդիրներով հոխացած..... 3 Արշ.

ԹՈՒՍԱԳՐՈՒԹՅԱՆ Նոր Դասագիրք. Տեսական եւ Գործնական. Մանկավարժական նոր եւ դիւրուսոյց եղանակաւ եւ պարզ ու դիւրութեամբ ապացուցուած քաղաք պատրաստուած. կը բաժնուի երեք մասերու.

Մասն Ա. — Չորս գործողութիւն ամբողջ թուոց, 600 ի մօտ հրահանգներով եւ գործնական խնդիրներով. Բ. տպագրութիւնն բարեփոխեալ եւ նոսրացեալ..... 4 Արշ.

Մասն Բ. — Չափք, կշիռք եւ դրամք. Տասնորդական կոտորակք. Յատկութիւնք թուոց. Հասարակ կոտորակք. Թուրքիոյ հին եւ նոր չափուց եւ կշիռք բաղդատութիւնք. Թուրքիոյ հին եւ նոր չափուց եւ կշիռք գինեթուղի բաղդատութիւնք. մօտ 500 հրահանգք եւ գործնական խնդիրք. Աղիւսակք..... 4 Արշ.

Մասն Գ. — կշիռութիւն եւ Համեմատութիւն. Նրից կանոն. Շահու կանոն. Աղիւսակ կանոն. Միջին պայմանաժամու կանոն. Միջնորդչէք. Հարիւրին պայսափ շահ կամ վնաս. Բնկերութեան կանոն. Խառնուրդ, Մետաղաց բաղդարութիւն. Քառակուսի եւ Քառակուսի արմատ. Խորանարդ եւ Խորանարդ արմատ. 500 է աւելի գործնական խնդիրք, եւայլն, եւայլն..... 4 Արշ.

Ա. եւ Բ. Մասուց միասին կազմուած..... 7 1/2 »

Ա. Բ. Գ. Մասուց միասին կազմուած..... 10 Արշ.

ԲԱՆՍԱԼԻ ԹՈՒՍԱԳՐՈՒԹՅԱՆ. Պատասխանիք եւ պատճառաբանեալ լուծմունքք հրահանգաց եւ խնդրոց՝ Ա. Բ. Գ. մասանց Թուագիտութեան (Հրատարակիչի):

Հիշարձան—Պատկոյ Ատարազարի

Տարիէ մը ի վեր հաստատեալ ի Կ. Պոլիս, Սուլթան Համամ. կը պարունակէ իւր մէջ 11 ընդարձակ սենեակներ, հանդերձ ապրանաց համար ուրոյն մթերանոցով:

Ատարազարի հիւրանոցն ի մէջ այլ առաւելութեանց, ունի առանձին և մաքուր սրճարան, ո՛ւր դիմող բազմաթիւ յաճախորդք ընդհանրապէս գոհութիւն կը յայտնեն, և փափաքողք՝ օրուան լրագրաց ընթերցմամբ ալ կրնան պարտադիր:

Ընտանեաց հանգստեան համար՝ նախահոգ միջոցներն մտածուած են, և շատ դիւրութիւններ կ'ընծայէ այս մասին Հիւրանոցն՝ իւր ամէն կերպ յարմարութիւններովը. ցարդ ընտանեօք յաճախողներն՝ ուրիշ նմանօրինակ պանդոկներէ աւելի գոհ մնացած են:

Հիւրանոցի օդաւէտ և շրջահայեաց դիրքն ալ ոչինչ նուազ նկատողութեան արժանի կէտ մ'է նորեկ և հետաքրքիր հիւրերու համար. մէկ կողմէն Ալաճա—Համամի պողոտան, միւս կողմէն՝ Մահմուտ—Փաշայի մի բազմակիսի անցքը, իսկ ուրիշ կողմէն՝ Էօմէր—էֆէնտի լայնարձակ փողոցը յաճախորդաց հաճոյալի տեսարան մը կ'ընծայեն,

Ապրանք գնելու մտօք յատկապէս ի Պոլիս եկող յաճախորդներու համար ալ ոչ նուազ հեշտալի է Հիւրանոցի մօտաւորութիւնը, որով վաճառականք՝ ամենայն դիւրութեամբ կրնան փոխադրել իրենց ապրանքը՝ արտիէի համար նախասահմանեալ սենեակն, ուրիշ ի վերջոյ սնտուկներու մէջ տեղափոխելով զայնս, կը տանին իրենց տեղերն:

Հարկ կը համարուի յիշել թէ, Ատարազարի Հիւրանոցին Տէրն՝ իւր ընտանեօք պանդոկին մէջը բնակելով, ընտանեօք հիւրընկալուիլ ուզող բարեկամ—ուզեւորաց հանգըստութեան համար բազմակողմանի առաւելութիւններ ունի, որով կարի գոհ պիտի մնան ի մայրաքաղաքս երթեւեկող ամէն անձինք, երբ բարեհաճին ուղղակի անդ դիմել:

Վերջապէս Հիւրանոց—Պանդոկին նկատմամբ պէտք եղած արդուզարդն ու պատշաճ յարգարանքն կանխամտածուած ու կարգադրուած լինելով, կը յայտարարուի արդոյ հասարակութեան՝ թէ այս նոր բացուած հաստատութեան մէջ թէ՛ առանձին, և թէ՛ ընտանեօք եկող անձնաւորութեանց համար գոհութիւն պատճառելու ջանք եւ աշխատութիւն չպիտի խնայուի:

Բաց ասկից, յանձնարարութիւնք եւս կ'ընդունուին խիստ աժան վարձագներով, և ընդ փոյթ ու անվրէպ կատարելու թէնութեամբ: (1—12)

Ա. Ռ. Տ. Ն. Ի. Ն. Տ. Ն. Ս. Ն. Ս. Ո. Ի. Թ. Ի. Ի. Ն.

ՅՕՐԻՆՅՅ

Մ. ՄԱՄՈՒՐՅԱՆ

(Երես 320, Գին 8 դանեկան)

Բազմարդիւն Հեղինակին գրչէն ելած այս եղական գործ իրաւամբ կրելով յինքեան կատարելութեան գրոջին, կը հանդիսանայ՝ ի պէտս Հայ օրիորդաց՝ դաստիարակութեան ընտիր ուղեցոյց մը, որ հրապուրիչ ոճով կ'աւանդէ Առաջին Տնտեսութեան կարևոր դասերն: Դիմել Կ. Պոլիս, Էսկի Չապիթի փողոց, Պէրպէրեան Տպարան:

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՑՈՒՆ ԹԷՅԻ

Կ. ՆԱՎՐՈՒԹՅԱՆ ԵՒ Յ. ԻՍԱԳՈՒԼՅԱՆ ԸՆԿ.

Պահէ—Գաբու, ձէլալ պէյ խանի դրան կից, Թիւ 10



Չմեռուան առթիւ սոյն հանրածանօթ վաճառատան մէջ պատրաստ կը գըտնուին Չիկէ և Ճալպէ ուղղակի հասած նոր թերք՝ բանազան տեղակի գերբնտիր եւ աղիւ ու անուշաբոյր ամէն ճաշակի յարմար: — Կարծողք նախընտրու համար՝ թէյով լեցուն ճարմնական, Չինական եւ Հնդկական այլ-այլ մեծութեամբք եւ ձեւերով գեղակերտ և նկարազարդ տախտակներ: — Կարծողք յաճախորդաց գոհացում աւուր համար բնաւ ջանք չը խնայուիր: — Գրեմնարարութիւնք կը կատարուին փութով և ճշգրութեամբ: — Գիները սրոյ եւ խիստ չափաւոր: — Չիք սակարկութիւն: (4—4)

Վ Ա Ճ Ա Ռ Ա Տ ՈՒ Ն

ԱՄԻՆ ՏԵՍԱԿ ԳԱՇՆԱԿԱՅ
ԵՐՈՒԱՆԴ ՅԱԿՈՒԲԵԱՆ

Վկայեալ դաշնակայարդար էՌԱՌԻ
հոշակաւոր գործատան

Գնումն եւ վաճառումն

Փոխանակութիւն հին դաշնակայ հետ

Կը վաճառուին ամէն տեսակ դաշ-
նակներ ամուսկան վճարմամբ և մասնա-
ւորաբար Գաղղիոյ լաւագոյն գործա-
րաններէն Քլէնի դաշնակները, խիստ
գիւրամատչելի գիններով:

Մասնաւոր յանձնարարութեամբ ամէն
գործարանաց դաշնակներէն կը բերուին:

Վարձու նոր դաշնակներ չափաւոր
գիններով:

Բաժանորդագրութիւն դաշնակաց
յարգարման (accord):

Ա Ր Ո Ւ Ե Ս Տ Ա Ն Ո Յ

Գաշնակաց նորագութեան, գաղղիական
ընտիր նիւթեղէններով:

ՀՐԱՀԱՆԳ դաշնակները շինցնելու
և լաւագոյն վիճակի մէջ պահելու:

Գաւառներէ եղած յանձնարարու-
թիւնք ամենայն խնամով և փութով կը
կատարուին:

Աւելի մանրամասնութեանց համար
գիմել Բերա, Մեծ-Փողոց, Ղալաթա
Սարայի դիմաց, Խրիսթաքի խան,
Թիւ 10:

Անմրցելի աժանութիւն
(5—30)

Վ Ա Ն Ր Ա Մ Ս Վ Ա Ճ Ե Ա Ն

Վիենայի Երաժշտանոցէն ելած ան-
ւանի դաշնակահար. մասնաւոր դասեր
ստանձնելու համար կուտայ հետեւեալ
հասցէն. Բերա, Գոմանտիկէրի նու-
գարանաց վաճառատունը, կամ ԾԱՂԻԿԻ
Խմբագրատունը, Պահչէ-Փարու, Թաշ
խան, Թիւ 50:

“Ծաղիկ,,ի Ա. Տարիև

ԾԱՂԻԿԻ Առաջին տարւոյ շրջանը,
գեղեցիկ և հաստատուն կերպով
կազմուած, կը վաճառուի ի դին 50
դրուշ:

ԱՐՏՕՆԱՏԻՐ Ա. ՍԱՔԱՅԵԱՆ

ՏՊԱԳՐ. ՆՏԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ
Էսկի-Ջուպիէ փողոց, քիւ 61

Վ Ա Ճ Ա Ռ Ա Տ ՈՒ Ն Ռ ՈՒ Ս Ա Կ Ա Ն Թ Է Յ Ե Ր ՈՒ Ն Ի Գ Օ Լ Ա Ե Ի Բ Օ Լ Ս Մ Ի Ր Ն Օ Յ Ե Ղ Բ Ա Ր Յ

Ղալաթիա, Ռուսական վանքին դիմաց, Այնիգոլա եկեղեցւոյն մօտ, Թիւ 30

Վաճառատունս՝ անցեալ տարւոյ Մայիսի սկիզբները բացուած լինելով, վա-
ճառելի թէյերու տեսակներն եւ գիններն ի ստոյն եւ նշանակեալ, կը ծանուցանէ
ի գիտութիւն յԱրգոյ հասարակութեան:

Թիւ 1. Լիանսին	Ֆունթ 32	Գահեկան
» 2. Չիւսկան վարդ	» 30	»
» 3. Պուքէ էմբիլիալ	» 26	»
» 4. Ֆուչէ Փու	» 20	»
» 5. Տնական Թէյ	» 16	»
» 6. Խնայողական տեսակը	» 12	»

Վերոյիշեալ թէյերը՝ մէկ, կէս և մէկ չորրորդ ֆունթնոց (133 արամ) ծրար-
ներու մէջ ամփոփուած՝ մետաքսեայ եւ կապարեայ թղթով պատած, իրենց վը-
րայ կը կրին վաճառատան կնիքն եւ ստորագրութիւնն: Սոյն թէյերը չաւրուե-
լու համար մթերանոցին մէջ մասնաւոր տեղ մը գրաւած են, ուր արգիւրուած է
նոյն իսկ ծխելն:

ԶԳՈՒՇԱՆԱԼ ԿԵՂՇԵՐԷՆ

Անոնք որ կրնան որոշել թէյին լաւն ու վատը, կարող են իրր նմոյշ գնել
վաճառատունէս փոքր ինչ և փորձել: Վաճառատանս միւս ճիւղն, որ ի Ռուսիա
աշխարհածանօթ է արդէն:

Սոյն թէյեր կը վաճառուին նաեւ ի Բերա, Թիւնելի դիմաց Ֆրաժէ վաճառա-
տունը, Պոլիս Պահչէ գաբու Շէյիսի լիւսամ խան Թիւ 2 Միւսիւ Նիքիթիչ էր-
պէնկին մթերանոցը, Օրթագիւղ Թաշ նէրաիւսան փողոց Թիւ 5 Պ. Կրիգոր
Միսկճեանի դեղարանը, Իւսկիւտար Թաշ Տէմիրճիլէր փողոց Թիւ 25 Միւսիւ Ա-
քէստորիսիին դեղարանը և Գասըգիւղ Նոյարավաճառ Բարաթանասիին մթե-
րանոցը Թիւ 19: (1—18)

ՏՊԱԳՐԻՉ ԵՒ ՓՈՐԱԳՐԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

և. Պոլիս, Էսկի Ջուպիէ փողոց, Թիւ 61

Պատիւ ունի ծանուցանել Մեծ. Հասարակութեան Թէ՛
Ըլատրաստ է տղազրել ամենայն խնամօք եւ մաքրութեամբ
Թէ՛ պատկերազարդ եւ Թէ՛ առանց պատկերի, Թուրքերէն,
Հայերէն եւ Ֆրանսերէն լեզուաւ Օրագիրք, Հանդէսք, Գը-
րեանք, Տեղեկագիրք, Հաշուեցոյցք, Շրջաբերականք, Հրա-
ւիրագիրք Հարսանեաց, Նամակագրութիւք, Այցաբարդք,
Մաշտոցք, եւ այլն:

Տպարանս ունի 3000 է աւելի զանազան պատկերք, որ
ձրիարար կը տրուին այն Հեղինակաց, որոց գործերն յանձ-
նուած են իրեն, եւ պէտք եղածներն եւս կը փորագրուին
չափաւոր գնով:

ՎԱՅՐԿԵՆԱԿԱՆ ԱՅՅԱՔԱՐՏ

ԾԱՆ. — Գաւառներէ եղած յանձնարարութիւնք ամե-
նայն նշանակեալ կը կատարուին, եթէ առձեմ ցուած
նրանցին հետ դրուի: